



## «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ  
2014թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտված տարվա համար

## Բովանդակություն

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	3
ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ .....	2
ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ .....	5
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ .....	6
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ .....	7
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ .....	8
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ .....	9-61

**ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ  
ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ  
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարությունը պատասխանատու է «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական վիճակը, գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (այսուհետ՝ «ՖՀՄՍ») համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն որոշակի գործարքների էության, Ընկերության ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության այլ միջոցառումների և դրույթների վերաբերյալ, և
- Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության և ապահովության մշակման, ներդրման և պահպանման համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2015թ. ապրիլի 30-ին:

Ստորագրված է Ընկերության ղեկավարության անունից՝

**Սամվել Գրիգորյան**

Գլխավոր տնօրեն

**Ալինա Խաչատրյան**

Գլխավոր հաշվապահի ժ/պ

30 ապրիլի, 2015թ.

*Երևան, Հայաստանի Հանրապետություն*

## ԱՆԿԱՏԱՆ ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՌԵՍՈ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերության բաժնետերերին և  
տորհորդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՌԵՍՈ» Ապահովագրական փակ բաժնետիրական  
ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են  
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն  
ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական  
արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների  
հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման  
քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

### *Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային  
Ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և  
ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման  
համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության  
արդյունքում առաջացող Էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական  
հաշվետվությունների պատրաստման համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է՝ մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքում  
կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտը  
իրականացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ  
ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք Էթիկայի պահանջներին և աուդիտը  
պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն Էական  
խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում,  
որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական  
հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ:  
Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ՝  
խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ ֆինանսական հաշվետվությունների  
Էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը  
դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով  
ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ  
ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք  
արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի  
արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները նաև ներառում են  
ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական  
հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից  
կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև  
ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և  
համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրությամբ «ՌԵՍՈ» Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

**Սրբուհի Հակոբյան**

Գործադիր տնօրեն

**Արփինե Ղևոնդյան**

Աուդիտի ղեկավար

Երևան, Հայաստանի Հանրապետություն  
Դելոյթ Արմենիա ՓԲԸ  
30 ապրիլի, 2015թ.

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2014 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար դրամ)	Ծան.	2014թ.	2013թ.
Համախառն ապահովագրավճարներ	4	2,616,844	5,795,866
Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	4	(124,088)	(141,768)
<b>Զուտ ապահովագրավճարներ</b>		<b>2,492,756</b>	<b>5,654,098</b>
Չեղարկված ապահովագրավճարներ և ապահովագրությունից ստացվելիք գումարների արժեզրկման պահուստ	4	(188,916)	(709,192)
Չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխություն	4	831,693	(141,241)
Վերաապահովագրության մասնաբաժնի փոփոխությունը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստում	4	(13,423)	25,352
<b>Զուտ վաստակած ապահովագրավճարներ</b>		<b>3,122,110</b>	<b>4,829,017</b>
Կարգավորված պահանջներ՝ հանած վերաապահովագրությունը	4	(2,110,785)	(3,290,100)
Ապահովագրության պայմանագրերի պահուստների փոփոխություն, առանց վերաապահովագրության	4	458,686	(66,842)
<b>Զուտ պահանջներ</b>		<b>(1,652,099)</b>	<b>(3,356,942)</b>
Սուբրոգացիաներ և վերականգնումներ՝ արժեզրկման կորուստների պահուստներից հետո	4	107,913	46,873
Ձեռքբերման ծախսեր	4	(460,659)	(789,300)
Հետաձգված ձեռքբերման ծախսերում փոփոխություններ	4	(89,036)	57,101
Զուտ եկամուտ վերաապահովագրության միջնորդավճարների տեսքով	4	30,986	36,792
Այլ ապահովագրական ծախսեր	4	(295,242)	(427,952)
<b>Ապահովագրական գործունեության արդյունք</b>		<b>763,973</b>	<b>395,589</b>
Տոկոսային եկամուտ	5(ա)	352,260	453,862
Տոկոսային ծախս	5(բ)	(145,655)	(193,211)
Այլ ներդրումային (ծախս)/եկամուտ	5(գ)	(14,880)	88,929
Այլ գործառնական եկամուտ		5,401	5,312
Վարչական ծախսեր	6	(781,478)	(1,078,551)
Պահուստների վերականգնում/(արժեզրկումից կորուստներ)	7	3,610	(18,806)
<b>Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը</b>		<b>183,231</b>	<b>(346,876)</b>
Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ	8	(99,100)	78,900
<b>Տարվա զուտ շահույթ/(վնաս)</b>		<b>84,131</b>	<b>(267,976)</b>
Այլ համապարփակ եկամուտ		-	-
<b>Ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար</b>		<b>84,131</b>	<b>(267,976)</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար 2015թ. ապրիլի 30-ին՝

Սամվել Գրիգորյան  
Գլխավոր տնօրեն

Ալինա Խաչատրյան  
Գլխավոր հաշվապահի ժ/պ

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)	Ծան.	31 դեկտեմբերի, 2014թ.	31 դեկտեմբերի, 2013թ.
<b>Ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	22,566	70,638
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	10	1,483,754	3,495,753
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	11,12	1,113,166	1,127,701
Տրված վարկեր	13	54,221	53,492
Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ	14	884,973	1,666,073
Վերաապահովագրողների բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստներում	17	72,269	86,085
Հետաձգված ձեռքբերման ծախսումներ		222,141	311,177
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	15	173,653	189,144
Այլ ակտիվներ	16	94,757	116,512
Ընթացիկ հարկային ակտիվներ		141,309	120,965
Հետաձգված հարկային ակտիվներ	21	-	79,500
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>4,262,809</b>	<b>7,317,040</b>
<b>Պարտավորություններ և սեփական կապիտալ</b>			
<b>Պարտավորություններ</b>			
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստ	17	1,184,756	2,475,529
Պարտավորություններ հետգնման պայմանագրերով	12	394,434	898,344
Փոխառություններ	18	-	1,287,907
Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ	19	219,910	307,342
Այլ պարտավորություններ	20	202,711	295,573
Հետաձգված հարկային պարտավորություններ	21	19,600	-
Ստորադաս փոխառություններ	18	1,005,869	859,007
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>3,027,280</b>	<b>6,123,702</b>
<b>Սեփական կապիտալ</b>			
Բաժնետիրական կապիտալ	22	1,870,000	1,870,000
Կուտակված վնաս		(634,471)	(676,662)
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>1,235,529</b>	<b>1,193,338</b>
<b>Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<b>4,262,809</b>	<b>7,317,040</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար 2015թ. ապրիլի 30-ին՝

Մամվել Գրիգորյան  
Գլխավոր տնօրեն

Ալինա Խաչատրյան  
Գլխավոր հաշվապահի ժ/պ

**Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2014 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար դրամ)	Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
<b>Մնացորդը առ 1 հունվարի 2013թ.</b>		<b>1,870,000</b>	<b>(366,746)</b>	<b>1,503,254</b>
Տարվա վնաս		-	(267,976)	(267,976)
<b>Ընդամենը տարվա համապարփակ վնաս</b>		<b>-</b>	<b>(267,976)</b>	<b>(267,976)</b>
Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժիններ	22	-	(41,940)	(41,940)
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.</b>		<b>1,870,000</b>	<b>(676,662)</b>	<b>1,193,338</b>
Տարվա շահույթ		-	84,131	84,131
<b>Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ</b>		<b>-</b>	<b>84,131</b>	<b>84,131</b>
Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժիններ	22	-	(41,940)	(41,940)
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.</b>		<b>1,870,000</b>	<b>(634,471)</b>	<b>1,235,529</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար 2015թ. ապրիլի 30-ին՝

Սամվել Գրիգորյան  
Գլխավոր տնօրեն

Ալինա Խաչատրյան  
Գլխավոր հաշվապահի ժ/պ



## Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	Ծան.	2014թ.	2013թ.
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>			
Ապահովագրության գծով ստացված ապահովագրավճարներ		2,960,422	4,400,375
Վերաապահովագրության գծով վճարված ապահովագրավճարներ		(76,689)	(106,395)
Վճարված պահանջներ և օգուտներ		(1,919,455)	(3,285,652)
Վճարված ձեռքբերման ծախսեր		(413,100)	(791,657)
Սուբրոգացիաներ և վերականգնումներ		32,894	27,372
Այլ ապահովագրական ծախսեր		(295,242)	(427,952)
Տոկոսային եկամուտ		413,968	418,406
Վարչական ծախսեր		(758,096)	(1,038,297)
<b>Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ</b>			
Այլ ակտիվների նվազում		14,069	11,806
Տրված վարկերի նվազում		8,584	6,383
Այլ պարտավորությունների (նվազում)/աճ		(8,982)	3,649
<b>Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ՝ նախքան տոկոսների և շահութահարկի վճարումը</b>		<b>(41,627)</b>	<b>(781,962)</b>
Վճարված տոկոսներ		(219,263)	(71,786)
Վճարված շահութահարկ		(20,344)	(58,268)
<b>Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(281,234)</b>	<b>(912,016)</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>			
Բանկերում տեղաբաշխված միջոցների դուրսբերումներ/(ավանդներ)		2,112,892	(1,830,232)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ		(30,481)	(102,171)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների իրացումից մուտքեր		18,559	-
<b>Ներդրումային գործունեությունից ստացված/(ներդրումային գործունեությունում օգտագործված) զուտ դրամական միջոցներ</b>		<b>2,100,970</b>	<b>(1,932,403)</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>			
Պարտավորություններ հետգնման պայմանագրերով		(502,524)	805,534
Ստացված փոխառություններ և ստորադաս փոխառություններ		-	2,049,470
Մարված փոխառություններ և ստորադաս փոխառություններ		(1,240,820)	-
Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարված շահաբաժիններ	22	(125,820)	-
<b>(Ֆինանսական գործունեությունում օգտագործված)/ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(1,869,164)</b>	<b>2,855,004</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ</b>		<b>(49,428)</b>	<b>10,585</b>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		1,356	(199)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		70,638	60,252
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ</b>	9	<b>22,566</b>	<b>70,638</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար 2015թ. ապրիլի 30-ին՝

Սամվել Գրիգորյան  
Գլխավոր տնօրեն

Ալինա Խաչատրյան  
Գլխավոր հաշվապահի ժ/պ

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

### 1. Ընդհանուր տեղեկություններ

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն 2008թ-ին Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունն ունի ոչ կյանքի ապահովագրության տասն ապահովագրական դասերով գործունեության իրականացման լիցենզիա: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») և Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի կողմից:

Հայաստանի Հանրապետությունում Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է գլխամասային գրասենյակի և գործակալների ցանցի միջոցով: Գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0014, Կոմիտաս 62/93 (մինչև 2013թ. հոկտեմբերի 9-ը Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց փող. 16 1/1):

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 102 լրիվ դրույքով աշխատողներ և 1,919 կոմիսիոն վճարումներով գործակալներ (2013թ-ին 138 լրիվ դրույքով աշխատողներ և 2,108 կոմիսիոն վճարումներով գործակալներ):

Ընկերության բաժնետերերն են՝ «Պոլիգրաֆիա» ՓԲԸ-ն (50%) և «Սի Այ Էս Էքսիթի Փարթներս Լիմիթիդ» ՍՊԸ-ն (50%): Ընկերության վերջնական վերահսկող են հանդիսանում երեք անձ՝ Սերգեյ Սարկիսովը (25%), Նիկոլայ Սարկիսովը (25%) և Գազիկ Զաքարյանը (50%):

### 2. Պատրաստման հիմունքները

#### (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

#### (բ) Ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

#### (գ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, մասնավորապես ակտիվների, պարտավորությունների, և պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտման վերաբերյալ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում գնահատման նշանակալի անորոշությունների և քննադատական դատողությունների վերաբերյալ տեղեկությունները նկարագրված են հետևյալ ծանոթագրություններում՝

- Ապահովագրության պայմանագրերի պահուստներ՝ Ծանոթագրություն 17
- Ապահովագրության գծով ստացվելիք գումարների գծով պահուստներ՝ Ծանոթագրություն 14

- Հետաձգված հարկային ակտիվներ՝ Ծանոթագրություն 21:
- Իրական արժեքով չափումներ՝ Ծանոթագրություն 25:

#### (դ) Պատրաստման հիմունքների այլ չափորոշիչներ

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության սկզբունքով և կշարունակի գործել մոտ ապագայում: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով չափվող որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, ինչպես ներկայացված է ստորև հաշվապահական հաշվառման քաղաքականությունում: Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ակտիվների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա: Ընկերությունը ՀՀ-ում գրանցված ընկերություն է և իր հաշվապահական հաշվառումը վարում է ըստ հաշվապահական հաշվառման տեղական օրենսդրության պահանջների: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են տեղական օրենսդրության համաձայն վարվող հաշվապահական գրանցումների հիման վրա և ճշգրտվել՝ ՖՀՄՍ պահանջներին համապատասխանություն ապահովելու համար: Ընկերությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը իրացվելիության կարգով: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

#### (ե) հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

**Փոփոխություններ ՖՀՄՍ-ներում, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա.** Ընթացիկ տարում ընդունվել են հետևյալ նոր և վերայնաված Ստանդարտները և դրանց մեկնաբանությունները:

- Փոփոխություններ ՀՀՄՍ 32 ստանդարտում. *Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում*
- Փոփոխություններ ՀՀՄՍ 36 ստանդարտում. *Վերականգնվող գումարների բացահայտումը ոչ ֆինանսական ակտիվների գծով*
- ՖՀՄՄԿ 21. *Տուրքեր:*

**Փոփոխություններ ՀՀՄՍ 32 ստանդարտում:** Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում: ՀՀՄՍ 32-ը պարզաբանում է ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցմանը վերաբերող պահանջները: Մասնավորապես, այս փոփոխությունները պարզաբանում են այնպիսի հասկացությունների նշանակությունը, ինչպիսիք են՝ «ներկայումս ունի հաշվանցման իրավաբանորեն գործադրելի իրավունք» և «միաժամանակյա իրացում և մարում»:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ, որոնք ենթակա են հաշվանցման:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 36 ստանդարտում. Վերականգնվող գումարների բացահայտումը ոչ ֆինանսական ակտիվների գծով:** ՀՀՄՍ 36 ստանդարտը ակտիվի կամ դրամաստեղծ միավորի վերականգնվող արժեքի հաշվանցման պահանջը սահմանափակում է այն ժամանակահատվածներով, որոնցում արժեքը կորուստը ճանաչվել է կամ հակադարձվել: Ավելին, դրանք ընդլայնում և պարզաբանում են բացահայտման պահանջները այն դեպքերում, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի վերականգնվող արժեքը որոշվել է իրական արժեքից հանած

իրացման գին հիմունքներով: Նոր բացահայտումները ներառում են իրական արժեքի հիերարխիան, հիմնական ենթադրությունները և գնահատման տեխնիկաները, որոնք համապատասխանում են ՖՀՄՍ 13 Իրական արժեքով չափումներ ստանդարտով պահանջվող բացահայտումներին:

**ՖՀՄՍԿ 21 Տուրքեր.** Այս մեկնաբանությունը կիրառելի է պետական մարմինների կողմից կիրառվող բոլոր տեսակի վճարումների գծով, բացառությամբ շահութահարկի, որոնք լուսաբանվում են ՀՀՄՍ 12 ստանդարտով, և բացառությամբ օրենքի խախտման դեպքում կիրառվող տույժեր և տուգանքների: Մեկնաբանությունը պարզաբանում է, որ տուրքերի վճարման պարտավորությունը պետք է ճանաչվի միայն այն դեպքում, երբ պարտադրող իրադարձությունը տեղի է ունեցել, և ուղղություն է տալիս այն մասին, թե արդյոք պարտավորությունը պետք է ճանաչվի առաջընթաց սկզբունքով որոշակի ժամանակահատվածի համար, թե ամբողջությամբ պետք է ճանաչվի կոնկրետ ամսաթվի դրությամբ:

Մեկնաբանությունը ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվությունների վրա, բացառությամբ Ընկերության քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունների:

Ընկերությունը չի իրականացրել որևէ հրապարակված սակայն դեռևս չգործող ստանդարտի, փոփոխության կամ մեկնաբանության վաղ կիրառություն:

### 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

#### (ա) Արտարժույթային գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են համապատասխան գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում դրանք առաջանում են: Համապատասխան փոխարժեքները ներկայացված են ստորև`

	<u>Միջին փոխարժեք</u>		<u>Սփոթ փոխարժեք</u>	
	<u>2014թ.</u>	<u>2013թ.</u>	<u>31 դեկտեմբերի, 2014թ</u>	<u>31 դեկտեմբերի, 2013թ</u>
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	415.75	409.55	474.97	405.64
ՀՀ դրամ/1 Եվրո	552.09	544.06	577.47	559.54

#### (բ) Ապահովագրության պայմանագրեր

##### (i) Պայմանագրերի դասակարգում

Ապահովագրության պայմանագիրն այն պայմանագիրն է, ըստ որի Ընկերությունը պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին կամ այլ շահառուին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի կամ այլ շահառուի վրա: Ապահովագրական ռիսկը չի ներառում ֆինանսական ռիսկը: Ֆինանսական ռիսկը հետևյալ նշվածներից մեկի կամ մի քանիսի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ սահմանված տոկոսադրույք, արժեթղթի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկունակություն կամ վարկային ինդեքս կամ այլ փոփոխական՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում, այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին: Ապահովագրության պայմանագրերը կարող են փոխանցել նաև որոշ ֆինանսական ռիսկ:

Ապահովագրական ռիսկը նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը կարող է Ընկերության կողմից նշանակալի հատուցումների վճարման պատճառ դառնալ: Պայմանագիրը, որը դասակարգվում է որպես ապահովագրության պայմանագիր, մնում է որպես ապահովագրության պայմանագիր, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց ժամկետը լրանում է: Պայմանագրերը, որոնց համաձայն Ընկերությանն ապահովադրից փոխանցվող ռիսկը նշանակալի չէ, դասակարգվում են որպես ֆինանսական գործիքներ:

***(ii) Պայմանագրերի ճանաչում և չափում***

***Ընդհանուր ապահովագրական պայմանագրեր***

***Ապահովագրավճարներ***

Համախառն ապահովագրավճարները ներառում են տարվա ընթացքում կնքված պայմանագրերից ստացված ապահովագրավճարները, անկախ այն փաստից, թե արդյոք դրանք ամբողջությամբ կամ մասնակի վերաբերում են հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններին: Ապահովագրավճարները բացահայտվում են համախառն հիմունքով՝ ներառելով միջնորդներին վճարվելիք կոմիսիոն վճարները և բացառելով ապահովագրավճարների գծով հարկերը և տուրքերը: Ստացված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես հասույթ: Ընկերությունն ապահովագրավճարները վաստակում է ռիսկն իր վրա վերցնելու ամսաթվից, փոխհատուցման ժամանակաշրջանի ընթացքում՝ կիրառելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Արտաքին վերաապահովագրության ապահովագրավճարները ճանաչվում են որպես ծախս՝ կիրառելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Արտաքին վերաապահովագրության ապահովագրավճարների այն մասը, որը չի ճանաչվում որպես ծախս, հաշվառվում է որպես կանխավճար:

***Ապահովագրության պայմանագրերի չեղարկում***

Ապահովագրության պայմանագիրը չեղարկվում է, եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ապահովադիրը չի ցանկանում կամ ի վիճակի չէ շարունակել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարների վճարումը: Այս իսկ պատճառով, չեղարկվում են հիմնականում ապահովագրության այն պայմանագրերը, որոնցով նախատեսված ապահովագրավճարները վճարվում են մասնաբաժիններով՝ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

***Չվաստակած ապահովագրավճարների պահուստ***

Չվաստակած ապահովագրավճարների պահուստն իրենից ներկայացնում է համախառն ապահովագրավճարների այն մասը, որն ակնկալվում է վաստակել հաջորդ կամ հետագա ֆինանսական տարիներում: Չվաստակած ապահովագրավճարների պահուստը հաշվարկվում է յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրի համար առանձին՝ օգտագործելով համամասնության մեթոդն օրական կտրվածքով: Չվաստակած ապահովագրավճարների պահուստը ճանաչելիս հաշվետու ամսաթվի դրությամբ ապահովագրության պայմանագրերի ակնկալվող չեղարկումները հաշվի չեն առնվում:

***Պահանջներ***

Չուտ պահանջները ներառում են ֆինանսական տարվա ընթացքում վճարված պահանջները՝ չվճարված պահանջների գծով պահուստի շարժի հետ մեկտեղ: Չվճարված պահանջները ներառում են հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված, սակայն չվճարված բոլոր պահանջների մարման համար գնահատված ամբողջ ծախսի գծով պահուստները, լինեն դրանք ներկայացված, թե՛ ոչ, ինչպես նաև հարակից արտաքին պահանջների մարման համար պահանջվող ծախսերի գծով պահուստները:

Չվճարված պահանջները գնահատելու համար ուսումնասիրվում են առանձին պահանջները և ձևավորվում են պահուստներ փաստացի, սակայն դեռ չներկայացված պահանջների գծով, ներքին և արտաքին կանխատեսելի դեպքերի հետևանքները, այդ թվում՝ արտաքին պահանջների մարման ծախսերը, օրենսդրական փոփոխությունները, նախկին փորձը և միտումները: Չվճարված պահանջների գծով պահուստները չեն գեղջվում:

Ներկայացված, սակայն չվճարված բոլոր պահանջների գծով պահուստը ստեղծվել է ճանաչելու համար կորուստների հաշվարկային քանակները, որոնք արդեն կրված են, սակայն դեռ չեն ներկայացված Ընկերությանը: Թե ներկայացված, սակայն չվճարված բոլոր պահանջների և թե չվճարված բոլոր պահանջների գծով պահուստները սահմանվում են ճանաչելու համար գնահատած արժեքները (այդ թվում՝ ծախսերը) կորուստների ամբողջությամբ կարգավորման դեպքում: Քանի որ ոչ մի տեղեկատվություն առկա չէ կրած կորուստների վերաբերյալ, Ընկերությանը ապավինում է իր փորձին, հաշվի առնելով ընթացիկ միտումները և այլ համապատասխան գործոններ: Ներկայացված, սակայն չվճարված բոլոր պահանջների գծով պահուստը գնահատվում է՝ հիմք ընդունելով ակնկալվող ծախսերի ակտուարային և վիճակագրական կանխատեսումները կորուստների լիարժեք կարգավորման և կառավարման համար: Վերլուծությունը կատարվում է՝ հիմք ընդունելով ներկա փաստերը և պայմանները, կանխատեսումները, ապագա գնաճի գնահատված մակարդակը և այլ սոցիալ-տնտեսական գործոններ: Գործոնները, որոնք օգտագործվում են կրած, սակայն չներկայացված կորուստների պահուստի կանխատեսվող չափը որոշելու համար, նաև ներառում են տվյալներ կորուստների հաճախականության դինամիկան, ինչպես նաև կորստի հաշվետվությունների ներկայացման ժամկետների ուշացումը: Ժամանակ առ ժամանակ, երբ հասանելի են դառնում նոր տեղեկություններ (այդ թվում՝ տեղեկատվություն փաստացի կորուստների վերաբերյալ), ապա վերլուծվում և քննարկվում են ներկայացված, սակայն չվճարված բոլոր պահանջների գծով պահուստները:

Վերաապահովագրության և սուբրոգացիայի գծով ակնկալվող վերականգնումները ճանաչվում են առանձին՝ որպես ակտիվներ: Վերաապահովագրության և սուբրոգացիայի գծով վերականգնումների գնահատման համար կիրառվում է չվճարված պահանջների գնահատման համար օգտագործվող նմանատիպ մեթոդը:

Նախորդ տարիներում ձևավորված պահանջների գծով պահուստների գումարների ճշգրտումներն արտացոլվում են այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որի ընթացքում կատարվել են ճշգրտումները, և առանձին բացահայտվում են՝ էական լինելու դեպքում: Կիրառվող մեթոդները և կատարված գնահատումները վերանայվում են կանոնավոր հիմունքով:

### **Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստ**

Պահուստ է ձևավորվում ուժի մեջ գտնվող ռիսկերի գծով, որոնք առաջանում են ընդհանուր ապահովագրության պայմանագրերի հետ կապված, երբ հաշվետու ամսաթվի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի չլրացած ժամկետներին վերագրելի պահանջների և ծախսերի անկնալվող արժեքը գերազանցում է այդ ապահովագրության պայմանագրերին վերաբերող չվաստակած ապահովագրավճարների պահուստը՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները հանելուց հետո: Ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստը հաշվարկվում է ելնելով բիզնեսի դասերից, որոնք կառավարվում են միասնական հիմունքով՝ չվաստակած ապահովագրավճարները և ուժի մեջ գտնվող պահանջների գծով պահուստներն ապահովելու համար կատարած ներդրումներից ակնկալվող ապագա հատույցները հաշվի առնելուց հետո:

Որպես ենթադրությունների ելքային տվյալներ սովորաբար օգտագործվում են Ընկերության ներքին աղբյուրների տվյալները: Ենթադրությունները ստուգվում են դիտարկելի շուկայական տեղեկատվության կամ այլ հրապարակված տեղեկատվության հետ դրանց համապատասխանությունն ապահովելու համար:

Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստի գնահատումը որպես կանոն ենթադրում է ավելի մեծ անորոշություն, քան արդեն իսկ տեղեկացված պահանջների գնահատումը, երբ առկա է ավելի մեծ ծավալով տեղեկատվություն: Փաստացի, սակայն չներկայացված պահանջները հաճախ հայտնի են դառնում Ընկերությանը պահանջի համար հիմք ծառայող պատահարի տեղի ունենալուց հետո որոշ ժամանակ անց: Ընկերության պորտֆելի կարճաժամկետ բնույթի պատճառով, պահանջների բավականին մեծ մասը մարվում է պահանջի համար հիմք ծառայող պատահարի տեղի ունենալուց հետո մեկ տարվա ընթացքում:

Զվճարված պահանջների ծախսը և տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստները գնահատվում են կիրառելով մի շարք վիճակագրական մեթոդներ: Այս մեթոդները էքստրապոլյացիայի են ենթարկում վճարված և փաստացի պահանջների զարգացումը, մեկ պահանջի միջին ծախսը և պահանջների վերջնական քանակը պատահարի յուրաքանչյուր տարվա համար՝ հիմք ընդունելով նախորդ տարիների դիտարկելի փոփոխությունները և ակնկալվող վնասի հարաբերակցությունները:

Կիրառվող հիմնական վիճակագրական մեթոդներն են՝

- Աստիճանային շղթայական մեթոդը, որը ենթադրում է նախորդ տարիների տվյալների օգտագործում որոշակի ամսաթվի դրությամբ պահանջների գծով վերջնական ծախսերի վճարված և փաստացի հարաբերակցությունը գնահատելու համար,
- Ակնկալվող վնասի հարաբերակցության մեթոդը, որի հիմքում ընկած են բիզնեսի գործունեության յուրաքանչյուր տեսակի գծով վնասի դրույթի Ընկերության ակնկալիքները,
- Համեմատական մեթոդը, որն օգտագործում է համադրելի, ավելի մեծ ժամկետով դասերի փորձը պահանջների գծով ծախսերը գնահատելու համար,
- Bornhuetter-Ferguson մեթոդը, որն իրենից ներկայացնում է աստիճանային շղթայական մեթոդի և ակնկալվող վնասի հարաբերակցության մեթոդի համակցությունը:

Փաստացի մեթոդը կամ մեթոդների համակցության կիրառումը կախված է ապահովագրության պայմանագրի դասից՝ հիմք ընդունելով նախկին տարիների պահանջների դիտարկելի փոփոխությունները:

Խոշոր պահանջները, որպես կանոն, գնահատվում են առանձին և չափվում են առանձին դեպքերի հիմունքով, կամ կանխատեսվում են առանձին՝ այս խոշոր պահանջների զարգացումներ և գործողության ոլորտի հետ կապված հնարավոր խեղաթյուրված հետևանքները հաշվի առնելու համար:

Փաստացի, սակայն չներկայացված պահանջների պահուստները և չվճարված պահանջների պահուստները սկզբնապես գնահատվում են համախառն հիմունքով, և իրականացվում է առանձին հաշվարկ վերաապահովագրության փոխհատուցումների չափը որոշելու համար: Փաստացի, սակայն չներկայացված ապահովագրության գծով ակտիվների հաշվեկշռային արժեքը գնահատելու համար այս մեթոդն օգտագործում է նախորդ տարիների տվյալները, փաստացի, սակայն չներկայացված պահանջների պահուստների համախառն գնահատականները և վերաապահովագրության պայմանագրերի պայմանները:

### **Ենթադրություններ**

Ընդհանուր ապահովագրության պայմանագրերի պահուստների չափման վրա ամենամեծ ազդեցությունն են գործում պատահարների առավել վաղ տարիների համար ակնկալվող վնասի հարաբերակցությանը վերաբերող ենթադրությունները: Ակնկալվող վնասի հարաբերակցությունը ակնկալվող պահանջներին վաստակած ապահովագրավճարների հարաբերակցությունն է: Պարտավորության ընդհանուր չափը որոշելիս դրամական միջոցների ապագա հոսքերի կանխատեսումը ներառում է այն չափորոշիչների գնահատված արժեքը, որոնք կարող են

ազդեցություն ունենալ առանձին պահանջի վրա (օրինակ՝ պահանջների հաճախականությունը, փոխհատուցման ժամկետները, ապահովագրվող պատահարի տեղի ունենալու ամսաթվի և պահանջի մարման միջև ընկած ժամանակահատվածը):

### **Զգայունության վերլուծություն**

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության գործունեության կարճաժամկետ բնույթի պատճառով, Ընկերության պորտֆելը զգայունություն է ցուցաբերում հիմնականում ակնկալվող վնասի հարաբերակցության փոփոխության նկատմամբ: Ընկերությունը ճշգրտումներ է կատարում ապահովագրական սակագների գծով, ելնելով այս փոփոխականների վերջին փոփոխություններից՝ վերջին միտումները հաշվի առնելու համար:

### **(iii) Վերաապահովագրություն**

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կիրառում է վերաապահովագրություն՝ վերաապահովագրողներին ռիսկի մասնակի փոխանցման միջոցով՝ իր հնարավոր զուտ վնասը սահմանափակելու նպատակով: Վերաապահովագրության համաձայնագրերը չեն ազատում Ընկերությանն ապահովադիրների հանդեպ ստանձնած իր պարտականություններից:

Փոխանցված ապահովագրավճարները և փոխհատուցված օգուտները ներկայացվում են շահույթում կամ վնասում և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ համախառն հիմունքով:

Վերաապահովագրության գծով ակտիվները ներառում են փոխանցված ապահովագրության գծով պարտավորությունների դիմաց վերաապահովագրական ընկերություններից ստացվելիք մնացորդները: Վերաապահովագրությունից վերականգնման ենթակա գումարները գնահատվում են նույն մեթոդով, ինչը կիրառվում է չվճարված պահանջների պահուստի կամ վերաապահովագրության պայմանագրի հետ կապված մարված պահանջների գնահատման համար:

Վերաապահովագրության գծով ենթադրվող ապահովագրավճարները ճանաչվում են որպես հասույթ և հաշվառվում են այնպես, ինչպես կհաշվառվեին, եթե վերաապահովագրությունը համարվեր ուղղակի բիզնես՝ հաշվի առնելով վերաապահովագրվող բիզնեսի ծառայությունների վերադասակարգումը:

Վերաապահովագրության պայմանագրերի շրջանակներում փոխհատուցման ենթակա գումարները գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ իրեն հասանելիք բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք, և այդ դեպքն արժանահավատորեն չափելի ազդեցություն ունի այն գումարների նկատմամբ, որոնք Ընկերությունը կստանա վերաապահովագրողից: Որպես վերաապահովագրության գծով ակտիվներ հաշվառվում են միայն այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք նախատեսում են նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում: Այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք չեն նախատեսում նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում, հաշվառվում են որպես ֆինանսական գործիքներ:

### **(iv) Հետսաձգված ձեռքբերման ծախսումներ**

Ձեռքբերման ծախսումները, որոնք իրենցից ներկայացնում են ապահովագրական գործակալներին և բրոքերներին վճարված կոմիսիոն գումարները և վերաապահովագրության գծով կոմիսիոն վճարներ, հետսաձգվում ու ամորտիզացվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում Ընկերությունը վաստակում է համապատասխան ապահովագրավճարները:



Հետաձգված ձեռքբերման ծախսումները նվազեցվում են այն կումիսիոն գումարների չափով, որոնք ենթակա են վճարման ապագա ժամանակաշրջաններին վերաբերող ժամկետանց ապահովագրության պայմանագրերի հետ կապված:

**(v) Պարտավորությունների համարժեքության ստուգում**

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է պարտավորությունների համարժեքության ստուգում, որոշելու համար, թե արդյոք ապահովագրության պայմանագրերի պահուստները (հանած դրանց հետ կապված՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները և ոչ նյութական ակտիվները, ինչպիսիք են ձեռնարկատիրական գործունեության միավորման կամ պորտֆելի փոխանցման արդյունքում ձեռք բերված ապահովագրության պայմանագրերը) համարժեք են: Այս ստուգումների համար օգտագործվում են ապագա պայմանագրային դրամական հոսքերի և հարակից ծախսերի, այդ թվում՝ պահանջների մարման ծախսերի, ապահովագրության պայմանագրերի պահուստներն ապահովող ակտիվներից ստացված ներդրումային եկամտի ներկայիս լավագույն գնահատականը: Պակասորդի բացահայտման դեպքում համապատասխան հետաձգված ձեռքբերման ծախսումները և համապատասխան ոչ նյութական ակտիվները արժեզրկվում են, իսկ անհրաժեշտության դեպքում ձևավորվում է լրացուցիչ պահուստ: Պակասորդը ճանաչվում է հաշվետու տարվա շահույթում կամ վնասում:

**(vi) Ապահովագրության գծով ստացելիք և վճարվելիք գումարներ**

Ապահովադիրներին, գործակալներին և վերաապահովագրողներին վճարվելիք և նրանցից ստացվելիք գումարներն իրենցից ներկայացնում են ֆինանսական գործիքներ և ներառվում են ապահովագրության գծով ստացելիք և վճարվելիք գումարների կազմում, այլ ոչ՝ ապահովագրության պայմանագրերի պահուստներում կամ վերաապահովագրության գծով ակտիվների կազմում: Ապահովադիրների կողմից վճարվելիք գումարները ճանաչելիս հաշվետու ամսաթվի դրությամբ ապահովագրության պայմանագրերի ակնկալվող չեղարկումները հաշվի չեն առնվում: Ընկերությունը արժեզրկման տեսանկյունից կանոնավոր կերպով վերանայում է ապահովագրության գծով ստացվելիք գումարները: Արժեզրկման գծով հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է սույն ծանոթագրության կետ «թ»-ում:

**զ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Ընկերությունը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում դրամական միջոցները, ընթացիկ հաշիվների մնացորդները և ցպահանջ ավանդները:

**դ) Ֆինանսական գործիքներ**

**(i) Դասակարգում**

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ են, որոնք

- հիմնականում ձեռք են բերվել մոտ ապագայում վաճառքի կամ հետգնման նպատակով
- կազմում են միասին կառավարվող ֆինանսական գործիքների մի մաս, որոնց համար առկա է կարճաժամկետ շահույթ հավաքագրելու վկայություն
- ածանցյալ գործիքներ են (բացառությամբ նշանակված ածանցյալ գործիքների և արդյունավետ հեջավորման գործիքների)
- սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերության կողմից նշանակվել են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները այն ֆինանսական ակտիվներն են, որոնք պահվում են մի բիզնես մոդելում, որի նպատակն է պահել այդ ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով: Այդ ֆինանսական ակտիվների պայմանագրային դրոյթներից են բխում հստակ ժամկետներով դրամական հոսքեր, որոնք միմիայն մայր գումարների և չմարված գումարի մնացորդի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

**(ii) Ճանաչում**

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

**(iii) Չափում**

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- ամորտիզացված արժեքով ֆինանսական գործիքների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի մեթոդով: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

**(iv) Իրական արժեքի չափման սկզբունքները**

Իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի ընթացքում՝ հիմնական շուկայում, կամ՝ դրա բացակայության դեպքում՝ առավել նպաստավոր շուկայում, որը չափման ամսաթվի դրությամբ հասանելի է Ընկերությանը: Պարտավորության իրական արժեքը արտացոլում է չկատարման ռիսկը:

Հասանելիության դեպքում, Ընկերությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ օգտագործելով տվյալ գործիքի համար ակտիվ շուկայում նշված գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և ծավալով, շարունակական հիմունքներով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Այն դեպքում, եթե ակտիվ շուկայում առկա չէ գնանշված գին, Ընկերությունը կիրառում է գնահատման տեխնիկա, որը մեծացնում է համապատասխան դիտարկելի մուտքային տվյալների օգտագործումը և նվազագույնի է հասցնում ոչ դիտարկելի մուտքային տվյալների օգտագործումը: Ընտրված գնահատման տեխնիկան ներառում է բոլոր գործոնները, որոնք շուկայի մասնակիցների կողմից հաշվի կառնվեին այդ հանգամանքներում:

Ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն վկայությունը սկզբնական ճանաչման պահին սովորաբար գործարքի գինն է, այսինքն տրված կամ ստացված վճարի իրական արժեքը: Եթե Ընկերությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքի մասին վկայող գնանշված արժեք առկա չէ ակտիվ շուկայում համանման ակտիվի կամ պարտավորության մասով, կամ հիմնված գնահատման այն մեթոդի վրա, որը օգտագործում է միմիայն դիտարկելի շուկայում առկա տվյալներ, ֆինանսական գործիքը սկզբնապես չափվում է իրական արժեքով, ճշգրտված սկզբնական չափման պահին առկա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության չափով: Հետագայում, այդ տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքներով՝ գործիքի օգտակար ծառայության ընթացքում, սակայն ոչ ուշ քան այն պահը, երբ գնահատումը ամբողջապես հնարավոր կլինի հիմնել շուկայում դիտարկելի տվյալների վրա կամ երբ գործարքը կփակվի:

Ակտիվները և երկար դիրքերը չափվում են առաջարկի գնով, պարտավորությունները և կարճ դիրքերը՝ պահանջարկի գնով: Այն դեպքում, երբ Ընկերությունը ունի դիրքեր ռիսկերի հաշվանցմամբ, ռիսկերի դիրքերի հաշվանցման չափման նպատակով օգտագործվում է միջին շուկայական արժեքը, և պահանջարկի կամ առաջարկի գնով ճշգրտումներ են կատարվում միայն բաց զուտ դիրքերի հանդեպ, ըստ անհրաժեշտության: Իրական արժեքները արտացոլում են գործիքի վարկային ռիսկը և ներառում են ճշգրտումներ Ընկերության և նրա գործընկերոջ վարկային ռիսկը հաշվի առնելու նպատակով, ըստ անհրաժեշտության: Իրական արժեքի գնահատումները, որոնք ստացված են մոդելներից, ճշգրտվում են այն գործոնների տեսանկյունից, որոնք են իրացվելիության ռիսկը կամ մոդելի անորոշությունները, այնքանով որքանով Ընկերությունը համարում է, որ շուկայի երրորդ կողմ մասնակիցը դրանք հաշվի կառնի գործարքի գինը որոշելիս:

**(v) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս**

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության՝ իրական արժեքի փոփոխության արդյունքում առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով վերաչափվող ֆինանսական գործիքի օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում,
- Այլ համապարփակ եկամուտի միջոցով իրական արժեքով վերաչափվող ֆինանսական գործիքի օգուտը կամ վնասը կապիտալում ճանաչվում է որպես այլ համապարփակ եկամուտ մինչև ակտիվը ապաճանաչվում է, որի ժամանակ կապիտալում նախկինում ճանաչված կուտակված եկամուտը կամ կորուստը ճանաչվում է չբաշխված շահույթում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով, օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի միջոցով:

**(vi) Ապաճանաչում**

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները: Ստեղծված կամ չբաշխված ցանկացած իրավունք կամ պարտավորություն փոխանցման ժամանակ

առանձին ճանաչվում են որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ այն մարվում է:

**(ե) Հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրեր**

Հետգնման (ռեպո) համաձայնագրերով վաճառվող արժեթղթերը հաշվառվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ՝ այդ արժեթղթերը պահպանելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և գործընկերոջ պարտավորությունը ներառելով որպես վճարվելիք գումարներ՝ հետգնման պայմանագրերով: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի համաձայնագրերով (հակադարձ ռեպո) գնված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ ռեպո գործարքներից ստացվելիք գումարներ: Գնման գնի և վերավաճառքի տարբերությունը ներկայացնում է տոկոսային եկամուտը և ճանաչվում է ռեպո համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում շահույթում կամ վնասում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ակտիվները գնված վերավաճառքի համաձայնագրերով վաճառվել են երրորդ կողմերին, արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

**(զ) Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

**(է) Հիմնական միջոցներ**

**(i) Սեփական ակտիվներ**

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

**(ii) Մաշվածություն**

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

	<b>Օգտակար ծառայություն (տարիներ)</b>
Գրասենյակային գույք	3-5 տարի
Կապի սարքավորումներ, համակարգիչներ	3-5 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի
Վարձակալվող ակտիվների վրա կապիտալացվող բարելավումներ	20 տարի

## **(ը) Ոչ նյութական ակտիվներ**

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

## **(թ) Արժեզրկում**

### ***(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ***

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում բաղկացած են ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներից («ֆինանսական գործիքներ ամորտիզացված արժեքով») և վարկերից ու դեբիտորական պարտքերից («վարկեր ու դեբիտորական պարտքեր»):

Ընկերությունը հաճախակի վերանայում է ամորտիզացված արժեքով հաշվառվող իր ֆինանսական գործիքները արժեզրկումը գնահատելու համար: Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքը արժեզրկվում է և արժեզրկման կորուստներն առաջանում են, միայն ու միայն այն դեպքում, եթե առկա արժեզրկման անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել մեկ կամ մի քանի կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ամորտիզացված արժեքով ֆինանսական գործիքի արժեզրկման կորուստ է տեղի ունեցել, կորուստը չափվում է ամորտիզացված արժեքով ֆինանսական գործիքի հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի միջև եղած տարբերությամբ: Պայմանագրային դրամական հոսքերը՝ ճշգրտված համապատասխան տվյալներով, որոնք արտացոլում են այժմյան տնտեսական պայմանները, հիմք է հանդիսանում ակնկալվող դրամական հոսքերը գնահատելու համար:

Ընկերությունը հաճախակի վերանայում է իր վարկերն ու դեբիտորական պարտքերը արժեզրկումը գնահատելու համար: Վարկը արժեզրկվում է և արժեզրկման կորուստներն առաջանում են միայն այն դեպքում, երբ առկա արժեզրկման անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել մեկ կամ մի քանի կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Սկզբում Ընկերությունը գնահատում է, թե արդյոք անկողմնակալ վկայությունը առկա է անհատական սկզբունքով նշանակալի վարկերի համար, և անհատական կամ հավաքական հիմունքով, եթե վարկերը նշանակալի չեն:

Եթե Ընկերությունը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ անհատական գնահատված վարկի համար՝ նշանակալի կամ ոչ նշանակալի լինելու հանգամանքը, ապա վարկն ընդգրկվում է նույն ռիսկայնություն ունեցող վարկերի խմբի մեջ և միասին գնահատվում է արժեզրկման համար: Վարկերը, որոնք անհատական են գնահատվել արժեզրկման համար և որի համար արժեզրկման կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներգրավվում խմբային սկզբունքով արժեզրկման գնահատման վարկերի խմբի մեջ:

Եթե անկողմնակալ վկայություն կա, որ վարկի համար արժեզրկման կորուստ է առաջացել, կորուստը չափվում է վարկի հաշվեկշռային արժեքի ու ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությամբ, ներառյալ երաշխիքներից և գրավներից ստացվելիք դրամական միջոցների ներկա արժեքը գեղչված վարկի սկզբնական տոկոսադրույքով: Պայմանագրային դրամական հոսքերը և պատմական կորստի փորձը՝ ճշգրտված համապատասխան

տեղեկատվության հիման վրա, որոնք արտացոլում են ներկա տնտեսական իրավիճակը, հիմք են հանդիսանքում ակնկալվող դրամական հոսքերի գնահատման համար:

**(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ**

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Ակտիվի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. Օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը գեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

**(ժ) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե հետևանքներն էական են, ապա պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը գեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և, անհրաժեշտության դեպքում, այդ պարտավորությանը հաստուկ ռիսկերը:

**(հ) Բաժնետիրական կապիտալ**

**(i) Սովորական բաժնետոմսեր**

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազում՝ առանց հաշվի առնելու հարկային հետևանքները:

**(ii) Արտոնյալ բաժնետոմսեր**

Արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ, եթե ենթակա չեն հետգնման կամ ըստ Ընկերության որոշման ենթակա են հետգնման, և շահաբաժինները վճարվում են հայեցողական կարգով: Այդ դեպքում շահաբաժինները ճանաչվում են որպես սեփական կապիտալի բաշխում՝ Ընկերության բաժնետերերի հաստատումից հետո:

Արտոնյալ բաժնետիրական կապիտալը դասակարգվում է որպես պարտավորություն, եթե ենթակա է հետ գնման որոշակի նշված ամսաթվին կամ ըստ բաժնետերերի որոշման, կամ եթե

շահաբաժինները վճարվում են ոչ հայեցողական կարգով: Այդ դեպքում շահաբաժինները ճանաչվում են տոկոսային ծախս շահույթում կամ վնասում՝ հաշվեգրվելուն պես:

**(iii) Բաժնետիրական կապիտալի հետզնում**

Երբ բաժնետիրական կապիտալը, ճանաչված որպես սեփական կապիտալ, հետ է գնվում, վճարվող գումարը՝ ներառյալ ուղղակիորեն իրեն վերաբերող ծախսերը, նվազեցվում են սեփական կապիտալից:

**(iv) Շահաբաժիններ**

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

**(i) Հարկում**

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին: Այդ դեպքում այն ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին և ազդեցություն չունեն հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկի գումարը չափվում է ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի հիման վրա՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

**(խ) Տոկոսային եկամուտ և ծախսեր, կոմիսիոն վճարների տեսքով եկամուտ և այլ վճարներ**

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում հաշվեգրվելու ժամանակ՝ հաշվի առնելով ակտիվի/պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը կամ կիրառելի լրդացող դրույքը: Տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են գեղջի կամ հավելավճարի ամորտիզացիոն կամ տոկոսակիր գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքի և մարման ժամկետի դրությամբ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված դրա գումարի միջև այլ տարբերությունները:

Այլ վճարները և կոմիսիոն եկամուտը ճանաչվում է համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

**(ճ) Ընդունված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՄ-ներ**

Ընկերությունը դեռևս չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՄ-ները, որոնք հրապարակվել են, սակայն դեռևս չեն գործում:

<ul style="list-style-type: none"> <li>• ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվականներ</li> <li>• ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվականներ</li> </ul>	<p>Գործում է 2014թ. հուլիսի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>
<ul style="list-style-type: none"> <li>• ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թվականներ</li> </ul>	<p>Գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>
<ul style="list-style-type: none"> <li>• ՖՀՄՄ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ</li> </ul>	<p>Գործում է 2017թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>
<ul style="list-style-type: none"> <li>• ՖՀՄՄ 9. Ֆինանսական գործիքներ</li> </ul>	<p>Գործում է 2018թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>

**ՖՀՄՄ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ.** 2014թ. մայիսին հրապարակվել է ՖՀՄՄ 15-ը, որը միասնական համընդհանուր մոդել է սահմանում կազմակերպությունների կողմից հաճախորդների հետ պայմանագրերից գոյացած հասույթի հաշվառման համար: ՖՀՄՄ 15-ը ուժի մեջ մտնելուց հետո կփոխարինի ներկայումս գործող հասույթի ճանաչման ուղեցույցը, այդ թվում՝ ՀՀՄՄ 18 Հասույթ, ՀՀՄՄ 11 Կառուցման պայմանագրեր և դրանց հարակից մեկնաբանությունները:

ՖՀՄՄ 15-ի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ Ընկերությունը պետք է ճանաչի հասույթը՝ ներկայացնելով խոստացված ապրանքների կամ ծառայությունների՝ հաճախորդին փոխանցման փաստը՝ այն գումարով, որը Ընկերությունը ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների դիմաց: Մասնավորապես, ստանդարտը ներկայացնում է որոշակի հիմունքներով մշակված հինգ քայլից բաղկացած մոդել, որը կիրառելի է հաճախորդների հետ ունեցած բոլոր պայմանագրերի գծով:

Մոդելում ներկայացված են հետևյալ հինգ քայլերը՝

- Հաճախորդի հետ ունեցած պայմանագրի սահմանում,
- Պայմանագրի կատարման պարտավորությունների սահմանում,
- Գործարքի գնի որոշում,
- Գործարքի գնի բաշխում պայմանագրի կատարման պարտավորությունների նկատմամբ,
- Հասույթի ճանաչում այն ժամանակ (կամ այն բանից հետո), երբ Ընկերությունը բավարարում է պայմանագրի կատարման պարտավորությունը:

Ըստ ՖՀՄՄ 15-ի, Ընկերությունը ճանաչում է հասույթը այն ժամանակ, կամ այն բանից հետո, երբ պայմանագրի կատարման պարտավորությունը բավարարված է, այսինքն՝ երբ տվյալ կատարման պարտավորությանն առնչվող ապրանքների կամ ծառայությունների վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: Ավելի նկարագրական ուղեցույց է ավելացվել նաև այնպիսի թեմաների մասով, ինչպիսիք են հասույթի ճանաչման պահը, փոփոխական հատուցման



հաշվառումը, պայմանագրի կատարման և ձեռքբերման հետ կապված ծախսերը և մի շարք այլ հարակից հարցեր: Նաև ներկայացված են նոր բացահայտումներ հասույթի գծով:

Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՀՄՍ 15-ի կիրառումը ապագայում կարող է ազդեցություն ունենալ հասույթի ճանաչման գումարի և ժամկետների վրա: Սակայն նպատակահարմար չէ ՖՀՄՍ 15-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

**ՖՀՄՍ 9. Ֆինանսական գործիքներ.** 2009թ. նոյեմբերին հրապարակված ՖՀՄՍ 9 նոր պահանջներ է սահմանել ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման համար: ՖՀՄՍ 9 փոփոխվել է 2010թ. հոկտեմբերին՝ ներառելով ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման պահանջներ, ինչպես նաև՝ 2013թ. նոյեմբերին՝ սահմանելով հեջավորման ընդհանուր հաշվառման նոր պահանջներ: 2014թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9-ի լրամշակված տարբերակը, որում հիմնականում ներկայացված են ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահանջները, ինչպես նաև ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման գծով սահմանափակ թվով փոփոխություններ: ՖՀՄՍ 9 նպատակ ունի փոխարինելու ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը ստանդարտը:

ՖՀՄՍ 9-ի հիմնական պահանջները հետևյալն են՝

- **Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը.** Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ բիզնես մոդելի, որով դրանք պահվում են, ինչպես նաև ըստ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի բնութագրերի: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են բիզնես մոդելում՝ նպատակ ունենալով հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, և պայմանագրով նախատեսված դրամական հոսքերն իրենից ներկայացնում են միայն մայր գումար և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում, սկզբնական ճանաչումից հետո սովորաբար չափվում են ամորտիզացված արժեքով: ՖՀՄՍ 9-ի 2014թ. տարբերակում ներկայացվում է «իրական արժեք այլ համապարփակ եկամտի միջոցով» հասկացությունը այն պարտքային գործիքների գծով, որոնք պահվում են բիզնես մոդելում՝ նպատակ ունենալով թե հավաքագրել պայմանագրային դրամական հոսքերը և թե վաճառել ֆինանսական ակտիվները, և որոնք ըստ պայմանագրի պայմանների բաղկացած են ֆինանսական ակտիվներից, որոնք առաջացնում են որոշակի ամսաթվերի դրությամբ դրամական հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միմիայն մայր գումար և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում՝ սկզբնական ճանաչումից հետո չափվելով իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով: Բոլոր այլ պարտքային և կապիտալ ներդրումները չափվում են իրենց իրական արժեքով: Ավելին, ՖՀՄՍ 9-ի համաձայն, կազմակերպությունները կարող են փոփոխման ոչ ենթակա որոշում կայացնել հետագա փոփոխությունները ներկայացնելու սեփական կապիտալում (որը չի պահվում առևտրային նպատակներով) ներդրման իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, ընդ որում շահույթում կամ վնասում ճանաչելով միայն շահութաբաժինների տեսքով եկամուտը:
- **Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը.** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են նույն կերպ՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն, սակայն առկա են տարբերություններ կապված Ընկերության սեփական պարտքային ռիսկի չափմանը վերաբերող պահանջների հետ: ՖՀՄՍ 9-ով պահանջվում է, որպեսզի ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է տվյալ պարտավորությանը բնորոշ պարտքային ռիսկին, ներկայացվի այլ համապարփակ եկամտում, եթե պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությունների ազդեցության ճանաչումը այլ համապարփակ եկամտում չի ստեղծում կամ մեծացնում շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանությունը: Ֆինանսական պարտավորության պարտքային ռիսկին վերագրվող իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն դասակարգվում շահույթում կամ վնասում:

- **Արժեզրկում.** ՖՀՄՍ 9-ի 2014թ. տարբերակում ներկայացվում է «Ակնկալվող վարկային վնասի» մոդելը ֆինանսական ակտիվների արժեզրկման չափման նպատակով՝ ի հակադրություն ՀՀՄՍ 39-ով նախատեսված հաշվեգրված վարկային վնասի մոդելի: Ակնկալվող վարկային վնասի մոդելով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը հաշվառի ակնկալվող վարկային վնասները և այդ ակնկալվող վարկային վնասներում տեղի ունեցած փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արտացոլելու համար պարտքային ռիսկում սկզբնական ճանաչման պահից ի վեր տեղի ունեցած փոփոխությունները: Այլ կերպ ասած՝ վարկային պատահարի տեղի ունենալը այլևս անհրաժեշտ պայման չէ վարկային վնաս ճանաչելու տեսանկյունից:
- **Հեջավորման հաշվառում.** Ներկայացնում է հեջավորման հաշվառման նոր մոդել, որը նպատակ ունի սերտ համապատասխանություն ապահովել կազմակերպությունների կողմից ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի հեջավորման ընթացքում գործադրվող ռիսկերի կառավարման գործընթացներին: Ըստ ՖՀՄՍ 9-ի ավելի ճկուն մոտեցում է սկսել կիրառվել հեջային հաշվառման ենթակա գործարքների տեսակների մասով, մասնավորապես, ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք կարող են դիտարկվել որպես հեջավորման գործիքներ, և ոչ ֆինանսական միավորների ռիսկի տարրերի տեսակները, որոնք ենթակա են հեջային հաշվառման: Ավելին, արդյունավետության ստուգումը փոխարինվել է «տնտեսական հարաբերությունների» սկզբունքով: Բացի այդ, այլևս չի պահանջվում հեջի արդյունավետության հետընթաց գնահատում: Ներդրվել են նաև Ընկերության ռիսկերի կառավարման գործունեության գծով բացահայտման լրացուցիչ պահանջներ:
- **Ապաճանաչում.** Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչման պահանջները շարունակելու են գործել ըստ ՀՀՄՍ 39:

Այս ստանդարտն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից և թույլ է տրվում դրա վաղ կիրառումը: Կախված ՖՀՄՍ 9-ի կիրառման ընտրված մոտեցումից, անցումային շրջանում տարբեր պահանջների գծով առաջին անգամ կիրառում կարող է տեղի ունենալ մեկ կամ մեկից ավելի ամսաթվերով:

Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով ներկայացված գումարների վրա: Սակայն, նպատակահարմար չէ ՖՀՄՍ 9-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

### **ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվականներ**

ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումների 2010-2012թթ. ընթացքում է մի շարք ՖՀՄՍ-ների փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ 2-ի փոփոխությամբ տեղի է ունենում փոփոխություն «իրավունքի առաջացման պայմաններ» և «շուկայական պայմաններ» հասկացությունների սահմանման մեջ, ավելացնելով «կատարողական պայմաններ» և «ծառայության պայմաններ» հասկացությունների սահմանումները, որոնք նախկինում ներառված էին «իրավունքի առաջացման պայմանների» սահմանման մեջ:

ՖՀՄՍ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ պայմանական վճարումը, որը դասակարգվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, պետք է չափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, անկախ նրանից, թե արդյոք պայմանական վճարը ֆինանսական գործիք է համաձայն ՀՀՄՍ 39-ի կամ ՖՀՄՍ 9-ի, կամ ոչ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն է:

ՖՀՄՍ 8-ում տեղի ունեցած փոփոխություններով պահանջվում է, որպեսզի ընկերությունը բացահայտի ղեկավարության դատողությունները՝ կիրառելով ամբողջականացման չափանիշը գործառնական սեզմենտների նկատմամբ և պարզաբանվում է, որ հաշվետու սեզմենտի ընդհանուր ակտիվների համեմատագրումը ընկերության ակտիվների հետ պետք է տեղի ունենա միայն այն

դեպքում, երբ սեզմենտի ակտիվները կանոնավորապես տրամադրվում են գլխավոր գործառնական որոշում կայացնող մարմնին:

ՖՀՄՍ 13-ի եզրակացության հիմքերի վերաբերյալ փոփոխությունները պարզաբանում են, որ ՖՀՄՍ 13-ի թողարկումը և դրան հետևած փոփոխությունները ՀՀՄՍ 39-ում և ՖՀՄՍ 9-ում չեն հանգեցնում կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքի՝ առանց տոկոսադրույքի նշման, հաշիվ-պարանքագրային արժեքով և առանց գեղչման չափման հնարավորության կասեցման, եթե գեղչման ազդեցությունը նշանակալի չէ: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում անմիջապես:

ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի փոփոխությունները վերացնում են առկա անհամապատասխանությունները կուտակված մաշվածության/ամորտիզացիայի հաշվառման գծով այն դեպքում, երբ հիմնական միջոցի միավորը կամ ոչ նյութական ակտիվը վերագնահատվում են: Ըստ վերանայված ստանդարտների պարզաբանվում է, որ համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը համապատասխան եղանակով և որ կուտակված մաշվածությունը/ամորտիզացիան իրենից ներկայացնում է համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության գծով վնասների հաշվարկով դիտարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը:

ՀՀՄՍ 24-ում տեղի ունեցած փոփոխությունները պարզաբանում են, որ առանցքային ղեկավար անձնակազմի ծառայություններ տրամադրող կառավարչական կազմակերպությունը հանդիսանում է հաշվետու ընկերության հետ փոխկապակցված կողմ: Համապատասխանաբար, հաշվետու ընկերությունը պետք է բացահայտի կառավարչական կազմակերպությանը առանցքային ղեկավար անձնակազմի ծառայությունների տրամադրման դիմաց վճարված կամ վճարման ենթակա բոլոր հաշվեգրված գումարները որպես կապակցված կողմերի հետ գործարքներ: Այնուամենայնիվ, նման փոխհատուցման բացահայտում չի պահանջվում:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

### **ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվականներ**

2011-2013 թվականների ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՍ 3-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ստանդարտը չի կիրառվում բոլոր տեսակի համատեղ ձեռնարկումների ձևավորման հաշվառման նկատմամբ տվյալ համատեղ ձեռնարկման ֆինանսական հաշվետվություններում:

ՖՀՄՍ 13-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խմբի գույք հիմունքով իրական արժեքի որոշման համար պորտֆելի բացառման շրջանակը ներառում է բոլոր պայմանագրերը, որոնք կարգավորվում են և հաշվառվում են համաձայն ՀՀՄՍ 39-ի կամ ՖՀՄՍ 9-ի, անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ պայմանագրերը համապատասխանում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների սահմանմանը համաձայն ՀՀՄՍ 32-ի:

ՀՀՄՍ 40-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՍ 40-ը և ՖՀՄՍ 3-ը փոխադարձաբար բացառելի չեն, և կարող է պահանջվել այդ երկու ստանդարտների միաժամանակ կիրառումը: Համապատասխանաբար, ներդրումային գույք ձեռք բերող ընկերությունը պետք է որոշի, թե արդյոք տվյալ գույքը համապատասխանում է ներդրումային գույքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 40-ի, և արդյոք գործարքը համապատասխանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սահմանմանը՝ համաձայն ՖՀՄՍ 3-ի:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

### ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թվականներ

2012-2014 թվականների ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՄ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՄ 5-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ակտիվի վերադասակարգումը կամ օտարումը՝ վաճառքի համար պահվող ակտիվից սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի կամ հակառակը, չպետք է համարվի վաճառքի պլանի կամ սեփականատերերին բաշխման պլանի փոփոխություն և պետք է կիրառվեն օտարման նոր մեթոդի հանդեպ կիրառելի դասակարգման, ներկայացման և չափման պահանջները: Ավելին, այս փոփոխություններով պարզաբանվում է, որ ակտիվները, որոնք այլևս չեն համապատասխանում սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի չափանիշներին, պետք է դիտարկվեն նույն կերպ, ինչ ակտիվները, որոնք դադարում են դասակարգվել որպես վաճառքի համար պահվող: Այս փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով:

ՖՀՄՄ 7-ի փոփոխությունները տրամադրում են լրացուցիչ պարզաբանում այն մասին, թե արդյոք սպասարկման պայմանագիրն իրենից ներկայացնում է փոխանցված ակտիվում շարունակական մասնակցություն փոխանցված ակտիվների գծով պահանջվող բացահայտումների տեսանկյունից: Ի լրումն, ՖՀՄՄ 7-ի փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանելու, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման բացահայտման պահանջները, թեև հստակորեն պարտադիր չէ ներկայացնել բոլոր միջանկյալ ժամանակահատվածների կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում, սակայն կարող է պահանջվել այս բացահայտումների ներառումը կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ՀՀՄՄ 34-ի հետ համապատասխանություն ապահովելու տեսանկյունից: Այս փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց կերպով:

ՀՀՄՄ 19-ի փոփոխությունները տրամադրում են պարզաբանում այն մասին, որ բարձր որակի կորպորատիվ պարտատուները, որոնք օգտագործվում են կենսաթոշակային հատուցումների զեղչատուկոսի գնահատման համար, պետք է թողարկվեն հատուցումների վճարման արժույթով: Փոփոխությունները կիրառվում են տվյալ փոփոխությունների առաջին անգամ կիրառմամբ ներկայացված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած ամենավաղ համեմատական ժամանակաշրջանից:

ՀՀՄՄ 34-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՄ 34-ով պահանջվող տեղեկատվությունը, որը ներկայացված միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների որևէ այլ մասում, սակայն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից դուրս, պետք է խաչաձև հղման միջոցով ներկայացվի միջանկյալ հաշվետվության և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների այլ մասերի միջև, որը հասանելի լինի օգտագործողներին միևնույն պայմաններով և միևնույն ժամանակ, ինչ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

#### 4. Ապահովագրական գործունեության արդյունք

2014թ.	Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն (Կասկո)	ԱՊՊԱ	Բժշկական ապահովագրություն	Գույքային ապահովագրություն	Այլ	Ընդամենը
<b>(հազար դրամ)</b>						
Համախառն ապահովագրավճարներ	215,445	2,006,388	58,599	154,636	181,776	2,616,844
Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	(60,570)	-	-	(38,022)	(25,496)	(124,088)
<b>Զուտ ապահովագրավճարներ</b>	<b>154,875</b>	<b>2,006,388</b>	<b>58,599</b>	<b>116,614</b>	<b>156,280</b>	<b>2,492,756</b>
Չեղարկված ապահովագրավճարներ և ապահովագրության գծով ստացվելիք գումարների արժեզրկման պահուստ	(11,047)	(110,637)	(46,171)	(6,732)	(14,329)	(188,916)
Չվաստակա ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխություն	20,074	57,572	758,929	10,913	(15,795)	831,693
Վերաապահովագրողների բաժինը չվաստակա ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում	(6,381)	-	-	(3,526)	(3,516)	(13,423)
<b>Զուտ վաստակա ապահովագրավճարներ</b>	<b>157,521</b>	<b>1,953,323</b>	<b>771,357</b>	<b>117,269</b>	<b>122,640</b>	<b>3,122,110</b>
Մարված պահանջներ	(171,294)	(1,174,764)	(601,140)	(3,262)	(8,174)	(1,958,634)
Պահանջների կարգավորման ծախսեր	(156)	(66,344)	(137,726)	-	(129)	(204,355)
Վերաապահովագրողների բաժինը մարված պահանջներում	51,001	-	-	1,110	93	52,204
<b>Մարված պահանջներ՝ առանց վերաապահովագրության</b>	<b>(120,449)</b>	<b>(1,241,108)</b>	<b>(738,866)</b>	<b>(2,152)</b>	<b>(8,210)</b>	<b>(2,110,785)</b>
Տեղի ունեցած բայց չներկայացած պահանջների պահուստի փոփոխություն	(162)	(5,324)	228,278	(169)	(1,246)	221,377
Ներկայացված, սակայն դեռ չմարած պահանջների պահուստների փոփոխություն	2,672	112,018	120,485	(311)	2,839	237,703
Պահանջների պահուստներում վերաապահովագրողների բաժնի փոփոխություն	(696)	-	-	302	-	(394)
<b>Ապահովագրական պայմանագրի պահուստի փոփոխություն, առանց վերաապահովագրության</b>	<b>1,814</b>	<b>106,694</b>	<b>348,763</b>	<b>(178)</b>	<b>1,593</b>	<b>458,686</b>
<b>Զուտ պահանջներ</b>	<b>(118,635)</b>	<b>(1,134,414)</b>	<b>(390,103)</b>	<b>(2,330)</b>	<b>(6,617)</b>	<b>(1,652,099)</b>
Սուբբոգացիաներ և հետ վերադարձվող գումարներ, արժեզրկման պահուստներից գուտ	8,716	96,240	2,651	-	306	107,913
Ձեռքբերման ծախսեր	(19,629)	(267,481)	(136,559)	(21,708)	(15,282)	(460,659)
Փոփոխություն հետաձգված ձեռքբերման ծախսերում	(3,793)	(51,699)	(26,394)	(4,196)	(2,954)	(89,036)
Վերաապահովագրության գուտ կումիսիոն եկամուտ	20,287	-	-	9,227	1,472	30,986
Այլ ապահովագրական ծախսեր	(4,179)	(259,015)	(27,624)	-	(4,424)	(295,242)
<b>Ապահովագրական գործունեության արդյունք</b>	<b>40,288</b>	<b>336,954</b>	<b>193,328</b>	<b>98,262</b>	<b>95,141</b>	<b>763,973</b>

2013թ.	Ավտոտրանսպորտային միջոցների ապահովա- գրություն (Կասկո)	ԱՊՊԱ	Բժշկական ապահովա- գրություն	Գույքային ապահովա- գրություն	Այլ	Ընդամենը
<b>(հազար դրամ)</b>						
Համախառն ապահովագրավճարներ	229,951	2,293,485	3,000,864	162,728	108,838	5,795,866
Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	(66,489)	-	-	(45,104)	(30,175)	(141,768)
<b>Զուտ ապահովագրավճարներ</b>	<b>163,462</b>	<b>2,293,485</b>	<b>3,000,864</b>	<b>117,624</b>	<b>78,663</b>	<b>5,654,098</b>
Չեղարկված ապահովագրավճարներ և ապահովագրության գծով ստացվելիք գումարների արժեզրկման պահուստ	(7,716)	(406,844)	(291,855)	(2,308)	(469)	(709,192)
Չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխություն	(38,729)	(151,542)	104,859	(31,980)	(23,849)	(141,241)
Վերաապահովագրողների բաժինը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում	13,001	-	-	7,865	4,486	25,352
<b>Զուտ վաստակած ապահովագրավճարներ</b>	<b>130,018</b>	<b>1,735,099</b>	<b>2,813,868</b>	<b>91,201</b>	<b>58,831</b>	<b>4,829,017</b>
Մարված պահանջներ	(160,124)	(1,447,822)	(1,652,530)	(501)	(2,141)	(3,263,118)
Պահանջների կարգավորման ծախսեր Վերաապահովագրողների բաժինը մարված պահանջներում	(280)	(67,319)	(3,036)	-	(60)	(70,695)
<b>Մարված պահանջներ՝ առանց վերաապահովագրության</b>	<b>(116,957)</b>	<b>(1,515,141)</b>	<b>(1,655,566)</b>	<b>(235)</b>	<b>(2,201)</b>	<b>(3,290,100)</b>
Տեղի ունեցած բայց չներկայացած պահանջների պահուստի փոփոխություն	(5,144)	(14,930)	(105,893)	166	58	(125,743)
Ներկայացված, սակայն դեռ չմարած պահանջների պահուստների փոփոխություն	(1,891)	(33,871)	95,651	2,031	(3,936)	57,984
Պահանջների պահուստներում վերաապահովագրողների բաժնի փոփոխություն	917	-	-	-	-	917
<b>Ապահովագրական պայմանագրի պահուստի փոփոխություն, վերաապահովագրությունից զուտ</b>	<b>(6,118)</b>	<b>(48,801)</b>	<b>(10,242)</b>	<b>2,197</b>	<b>(3,878)</b>	<b>(66,842)</b>
<b>Զուտ պահանջներ</b>	<b>(123,075)</b>	<b>(1,563,942)</b>	<b>(1,665,808)</b>	<b>1,962</b>	<b>(6,079)</b>	<b>(3,356,942)</b>
Սուբրոգացիաներ և հետ վերադարձվող գումարներ, արժեզրկման պահուստներից զուտ	448	46,195	230	-	-	46,873
Չեղքբերման ծախսեր	(27,761)	(255,918)	(473,513)	(21,605)	(10,503)	(789,300)
Փոփոխություն հետաձգված ձեռքբերման ծախսերում	2,008	18,514	34,256	1,563	760	57,101
Վերաապահովագրության զուտ կոմիսիոն եկամուտ	22,498	-	-	13,292	1,002	36,792
Այլ ապահովագրական ծախսեր	-	(231,722)	(196,230)	-	-	(427,952)
<b>Ապահովագրական գործունեության արդյունք</b>	<b>4,136</b>	<b>(251,774)</b>	<b>512,803</b>	<b>86,413</b>	<b>44,011</b>	<b>395,589</b>

## 5. Ներդրումային եկամուտ

<b>(հազար դրամ)</b>	<b>2014թ.</b>	<b>2013թ.</b>
<b>(ա) Տոկոսային եկամուտ</b>		
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	219,119	327,267
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	121,461	113,725
Տրված վարկեր	11,680	12,870
	<b>352,260</b>	<b>453,862</b>
<b>(բ) Տոկոսային ծախս</b>		
Վճարվելիք գումարներ հետգնման համաձայնագրերով	(73,311)	(72,024)
Փոխառություններ և ստորադաս փոխառություններ	(72,344)	(121,187)
	<b>(145,655)</b>	<b>(193,211)</b>
<b>(գ) Այլ ներդրումային (ծախս)/եկամուտ</b>		
Օգուտ փոխարժեքային տարբերությունից	7,086	257
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների հետ կատարված գործարքներից զուտ (վնաս)/օգուտ	(21,966)	88,672
	<b>(14,880)</b>	<b>88,929</b>
	<b>191,725</b>	<b>349,580</b>

## 6. Վարչական ծախսեր

<b>(հազար դրամ)</b>	<b>2014թ.</b>	<b>2013թ.</b>
Աշխատակիցների հատուցումներ	456,299	791,936
Վարձակալության և անվտանգության ծախսեր	111,844	86,365
Մաշվածություն և ամորտիզացիա	47,712	30,414
Հաղորդակցության ծախսեր	22,346	33,700
Աուդիտորական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ	20,048	33,978
Ծրագրային սպասարկման ծախսեր	20,005	20,129
Գովազդ	14,054	15,677
Վերանորոգման ծախսեր	13,625	22,002
Անդամակցության ծախսեր	11,694	8,969
Տույժեր և տուգանքներ	6,060	1,018
Կոմունալ ծախսեր	5,674	5,429
Գրասենյակային ծախսեր	5,570	17,484
Տրանսպորտի և գործուղման ծախսեր	5,277	5,424
Այլ վարչական ծախսեր	41,270	6,026
	<b>781,478</b>	<b>1,078,551</b>

## 7. Պահուստների վերականգնում/(արժեզրկումից կորուստներ)

<b>(հազար դրամ)</b>	<b>2014թ.</b>	<b>2013թ.</b>
Տրված վարկերի գծով արժեզրկման պահուստների վերականգնում/(արժեզրկումից կորուստներ) (Օան. 13)	(3,610)	18,806
	<b>(3,610)</b>	<b>18,806</b>

### 8. Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ

Ընկերությունը շահութահարկը վճարում է ընկերությունների համար կիրառվող 20% դրույքով (2013թ-ին՝ 20%):

(հազար դրամ)	<b>2014թ.</b>	<b>2013թ.</b>
<b>Ընթացիկ հարկի գծով ծախս</b>		
Ընթացիկ տարվա հարկային ծախս	-	-
<b>Հետաձգված հարկ</b>		
Հետաձգված հարկի գծով ծախս/(օգուտ)	99,100	(78,900)
<b>Ընդամենը շահութահարկի գծով ծախս/(օգուտ)</b>	<b>99,100</b>	<b>(78,900)</b>

### Արդյունավետ հարկային դրույքի համադրում

(հազար դրամ)	<b>2014թ.</b>	<b>2013թ.</b>
<b>Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը</b>	<b>190,917</b>	<b>(346,876)</b>
Շահութահարկի գծով ծախս/(օգուտ) կիրառելի հարկային դրույքով	38,183	(69,375)
Հանած՝ չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտ)	12,039	(9,525)
Ժամանակավոր տարբերությունների ազդեցությունը, որոնց գծով հետաձգված հարկ չի ճանաչվել նախորդ տարիներին	22,301	-
Չճանաչված հարկային վնասների ազդեցություն	26,577	-
	<b>99,100</b>	<b>(78,900)</b>

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ներկայացված են ծանոթագրություն 21-ում: Տարվա ընթացքում ղեկավարությունը չի ճանաչել հետաձգված հարկային ակտիվ 26,577 հազար դրամ գումարով՝ կապված տարվա ընթացքում առաջացած հարկային վնասների հետ, ինչը պայմանավորված է այդ ակտիվների իրացման գծով առկա անորոշություններով:

### 9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

(հազար դրամ)	<b>31 դեկտեմբերի, 2014թ.</b>	<b>31 դեկտեմբերի, 2013թ.</b>
<b>Ընթացիկ հաշիվներ</b>		
ՀՀ բանկերում	22,513	70,585
Կանխիկը դրամարկղում	53	53
	<b>22,566</b>	<b>70,638</b>

### Դրամական միջոցների և դրանց համարժեքների կենտրոնացումներ

2014 և 2013թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդները, որոնք անհատապես կազմում են ամբողջ դրամական միջոցների և դրանց համարժեքների ավելի քան 10%, հետևյալն են՝

(հազար դրամ)	<b>31 դեկտեմբերի, 2014թ.</b>	<b>31 դեկտեմբերի, 2013թ.</b>
Յունիբանկ	11,832	8,634
	<b>11,832</b>	<b>8,634</b>



## 10. Բանկերում տեղաբաշխված միջոցներ

2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերում տեղաբաշխված միջոցները 1,483,754 հազար ՀՀ դրամի չափով (2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,495,753 հազար ՀՀ դրամ) կազմում են ժամկետային ավանդներ հայկական բանկերում: Բանկերում տեղաբաշխված միջոցներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

### Բանկերում տեղաբաշխված միջոցների կենտրոնացումները

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերում տեղաբաշխված միջոցները, որոնք անհատապես կազմում են բանկերում տեղաբաշխված միջոցների ավելի քան 10%, հետևյալն են՝

<b>(հազար դրամ)</b>	<b>31 դեկտեմբերի, 2014թ.</b>
Արդշինբանկ	353,620
ՎՏԲ Բանկ (Հայաստան)	337,635
Հայէկոնոմբանկ	273,547
Յունիբանկ	251,647
Արարատբանկ	201,660
	<b>1,418,109</b>
	<hr/>
<b>(հազար դրամ)</b>	<b>31 դեկտեմբերի, 2013թ.</b>
Կոնվերսբանկ	419,421
ՎՏԲ Բանկ (Հայաստան)	418,684
Առէկսիմբանկ –Գազպրոմբանկի խումբ	408,474
Պրոկրեդիտբանկ	408,452
	<b>1,655,031</b>
	<hr/>

## 11. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները՝ 1,113,166 հազար ՀՀ դրամի չափով (2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,127,701 հազար) ներկայացնում են ՀՀ պետական գանձապետական պարտատուներ:

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրված ֆինանսական ակտիվների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 12-ում: Տոկոսադրույքների և հաշվետու ամսաթվի դրությամբ պահվող ֆինանսական գործիքների ժամկետայնության մասին տեղեկությունները ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

## 12. Ֆինանսական ակտիվների փոխանցումներ

### *Փոխանցված, սակայն դեռևս ամբողջությամբ չապաճանաչված ֆինանսական ակտիվներ*

Ընկերությունն ունի գործարքներ հետգնման համաձայնագրերով: Հետգնման համաձայնագրերով փոխատվության տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Ընկերության կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Ընկերության պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Ընկերության սահմանամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել: Այս գործարքներն իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետզման պայմանագրեր են ստորագրվել Արդշինինվեստբանկ ՓԲԸ-ի և ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ-ի հետ՝ տարեկան 24% տոկոսադրույքով (31 դեկտեմբերի 2013թ. Արդշինինվեստբանկ ՓԲԸ-ի հետ՝ տարեկան 9.25% տոկոսադրույքով և ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ-ի հետ՝ տարեկան 9.75% տոկոսադրույքով): 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համապատասխան պարտավորությունը՝ 394,434 հազար ՀՀ դրամ արժեքով, ներառում է հաշվեգրված տոկոս 1,353 հազար ՀՀ դրամի չափով (31 դեկտեմբերի 2013թ.՝ համապատասխանաբար 898,344 հազար ՀՀ դրամ և 2,809 հազար ՀՀ դրամ): Հետզման պայմանագրերը կնքվում են մինչև 30 օր ժամկետով:

<b>(հազար դրամ)</b>	<b>31 դեկտեմբերի, 2014թ.</b>	<b>31 դեկտեմբերի, 2013թ.</b>
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ որոնք գրավադրվել են հետզման պայմանագրերով	397,347	916,934
<b>Հարակից պարտավորության հաշվեկշռային արժեքը</b>	<b>394,434</b>	<b>898,344</b>

### 13. Տրված վարկեր

<b>(հազար դրամ)</b>	<b>31 դեկտեմբերի, 2014թ.</b>	<b>31 դեկտեմբերի, 2013թ.</b>
Վարկեր անհատներին	20,474	25,746
Վարկեր աշխատողներին	35,277	29,224
	<b>55,751</b>	<b>54,970</b>
Արժեզրկման գծով պահուստ	(1,530)	(1,478)
	<b>54,221</b>	<b>53,492</b>

Անհատներին տրված վարկերը ներկայացնում են սպառողական վարկեր, որոնք գնվել են 2011 թ. -ի հունվարի 25-ին Արմենիա Տելեֆոն Կոմպանի (ԱրմենՏել) ՓԲԸ-ից: Այդ վարկերը ԱրմենՏելի կողմից բջջային հեռախոսների ապառիկ վաճառքի պայմանագրեր են: Ընկերությունը նախատեսում է ստանալ դրամական հոսքեր այդ վարկերի համար մինչև 2015թ.: Դրամական հոսքերը զեղչվել են 24% տարեկան տոկոսադրույքով, որն արտացոլում է առանց գրավի սպառողական վարկերի ռիսկայնությունը:

Վարկերի արժեզրկման գծով պահուստի շարժի վերլուծությունը՝

<b>(հազար դրամ)</b>	<b>2014թ.</b>	<b>2013թ.</b>
Մնացորդը տարվա սկզբին	(1,478)	(4,312)
Տարվա հակադարձում/(ծախս)	3,610	(18,806)
(Վերականգնումներ)/դուրսգրումներ	(3,662)	-
<b>Մնացորդը տարեվերջին</b>	<b>(1,530)</b>	<b>(1,478)</b>

#### 14. Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ

(հազար դրամ)	<u>31 դեկտեմբերի, 2014թ.</u>	<u>31 դեկտեմբերի, 2013թ.</u>
Ստացվելիք գումարներ՝ առաջացած ուղղակի ապահովագրության գործառնություններից	883,533	1,434,752
Սուբրոգացիաներ	260,635	169,779
Կոմիսիոն վճարների գծով կանխավճարներ գործակալներին	79,201	-
Կանխավճարներ բժշկական կազմակերպություններին	36,164	298,388
Կանխավճարներ հատուցումների գծով	17,248	13,511
Վերաապահովագրության գործառնություններից ստացվելիք գումարներ	4,599	4,015
	<b>1,281,380</b>	<b>1,920,445</b>
Արժեզրկման գծով պահուստ	(396,407)	(254,372)
	<b>884,973</b>	<b>1,666,073</b>

Ապահովագրության գծով ստացվելիք գումարների արժեզրկման գծով պահուստի շարժի վերլուծություն.

(հազար դրամ)	<u>2014թ.</u>	<u>2013թ.</u>
Մնացորդը տարեսկզբին	254,372	236,940
Տարվա զուտ ծախս	122,911	179,962
Վերականգնումներ/(դուրսգումներ) տարվա ընթացքում	19,124	(162,530)
Մնացորդը տարեվերջին	<b>396,407</b>	<b>254,372</b>

#### 15. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

(հազար դրամ)	Գրասեն- յակային գույք	Կապի, հաղոր- դակցման միջոցներ և համակար- գիչներ	Փոխադ- րամի- ջոցներ	Ոչ նյութա- կան ակտիվներ	Վարձակալված ակտիվների վրա կապիտալացվող ծախսեր	Ընդա- մենը
<b>Մկզբնական արժեք</b>						
2014թ. հունվարի 1-ի						
դրությամբ	101,075	127,231	46,145	13,274	49,035	336,760
Ձեռքբերումներ	11,578	3,298	18,957	4,500	9,243	47,576
Օտարումներ	(2,099)	(470)	(20,220)	-	-	(22,789)
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>110,554</b>	<b>130,059</b>	<b>44,882</b>	<b>17,774</b>	<b>58,278</b>	<b>361,547</b>
<b>Մաշվածություն</b>						
2014թ. հունվարի 1-ի						
դրությամբ	35,658	92,694	15,583	2,388	1,293	147,616
Մաշվածության ծախս	24,366	6,513	11,151	5,559	3,565	51,154
Օտարումներ	(479)	(196)	(10,201)	-	-	(10,876)
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>59,545</b>	<b>99,011</b>	<b>16,533</b>	<b>7,947</b>	<b>4,858</b>	<b>187,894</b>
<b>Ջուտ հաշվեկշռային արժեք</b>						
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<b>51,009</b>	<b>31,048</b>	<b>28,349</b>	<b>9,827</b>	<b>53,420</b>	<b>173,653</b>
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<b>65,417</b>	<b>34,537</b>	<b>30,562</b>	<b>10,886</b>	<b>47,742</b>	<b>189,144</b>

(հազար դրամ)	Գրասեն- յակային գույք	Կապի, հաղորդակցման միջոցներ և համակարգիչներ	Փոխադ- րամի- ջոցներ	Ոչ նյութա- կան ակտիվներ	Վարձակալված ակտիվների վրա կապիտալացվող ծախսեր	Ընդա- մենը
<b>Մկրբնական արժեք</b>						
2013թ. հունվարի 1-ի						
դրությամբ	64,251	120,078	45,133	8,343	-	237,805
Ձեռքբերումներ	37,675	9,279	1,111	5,071	49,035	102,171
Օտարումներ	(851)	(2,126)	(99)	(140)	-	(3,216)
<b>2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>101,075</b>	<b>127,231</b>	<b>46,145</b>	<b>13,274</b>	<b>49,035</b>	<b>336,760</b>
<b>Մաշվածություն</b>						
2013թ. հունվարի 1-ի						
դրությամբ	20,832	87,152	6,659	992	-	115,635
Մաշվածության ծախս	15,677	7,668	9,023	1,536	1,293	35,197
Օտարումներ	(851)	(2,126)	(99)	(140)	-	(3,216)
<b>2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>35,658</b>	<b>92,694</b>	<b>15,583</b>	<b>2,388</b>	<b>1,293</b>	<b>147,616</b>
<b>Ջուտ հաշվեկշռային արժեք</b>						
<b>2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>65,417</b>	<b>34,537</b>	<b>30,562</b>	<b>10,886</b>	<b>47,742</b>	<b>189,144</b>
<b>2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>43,419</b>	<b>32,926</b>	<b>38,474</b>	<b>7,351</b>	<b>-</b>	<b>122,170</b>

3,442 հազար դրամ և 4,783 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը ներառված է այլ ապահովագրական ծախսերում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (տես Ծան. 4):

## 16. Այլ ակտիվներ

(հազար դրամ)	31 դեկտեմբերի, 2014թ.	31 դեկտեմբերի, 2013թ.
Կանխավճարներ ծառայությունների դիմաց	33,693	36,654
Նյութեր	35,115	46,246
Կանխավճարներ հարկերի գծով	17,405	-
Կանխավճարներ աշխատակիցներին	4,380	8,217
Այլ ստացվելիք գումարներ	4,164	25,395
	<b>94,757</b>	<b>116,512</b>

## 17. Ապահովագրական պայմանագրերի պահուստներ

(հազար դրամ)	31 դեկտեմբերի, 2014թ.			31 դեկտեմբերի, 2013թ.		
	Համախառն	Վերաապահովագրություն	Զուտ	Համախառն	Վերաապահովագրություն	Զուտ
Չվաստակաձ ապահովագրավճարների գծով պահուստ	920,134	(66,634)	853,500	1,751,827	(80,056)	1,671,771
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների գծով պահուստ	59,694	-	59,694	281,070	-	281,070
Չվճարված պահանջների պահուստ	204,928	(5,635)	199,293	442,632	(6,029)	436,603
<b>Ընդամենը ապահովագրական պայմանագրերի պահուստներ</b>	<b>1,184,756</b>	<b>(72,269)</b>	<b>1,112,487</b>	<b>2,475,529</b>	<b>(86,085)</b>	<b>2,389,444</b>

### (ա) Ապահովագրական պայմանագրի պահուստի շարժի վերլուծություն (համախառն վերաապահովագրություն)

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
<b>Մնացորդն առ 1 հունվարի</b>	<b>2,475,529</b>	<b>2,266,529</b>
Համախառն փոխանցված ապահովագրավճարներ (Շան. 4)	2,616,844	5,795,866
Չեղարկված ապահովագրավճարներ և ապահովագրական ստացվելիք գումարների պահուստ (Շան. 4)	(188,916)	(709,192)
Համախառն վաստակաձ ապահովագրավճարներ	(3,259,621)	(4,945,433)
Նախորդ տարվա պահանջներին վերաբերող գնահատականների և վճարումների փոփոխություն (Շան. 4)	(221,377)	125,743
Ընթացիկ տարվա պահանջների ակնկալվող ծախսը (Շան. 4)	(237,703)	(57,984)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի</b>	<b>1,184,756</b>	<b>2,475,529</b>

### (բ) Չվաստակաձ ապահովագրավճարների պահուստների շարժի վերլուծություն (համախառն)

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
<b>Մնացորդն առ 1 հունվարի</b>	<b>1,751,827</b>	<b>1,610,586</b>
Համախառն փոխանցված ապահովագրավճարներ (Շան. 4)	2,616,844	5,795,866
Չեղարկված ապահովագրավճարներ և ապահովագրական ստացվելիք գումարների պահուստ (Շան. 4)	(188,916)	(709,192)
Համախառն վաստակաձ ապահովագրավճարներ	(3,259,621)	(4,945,433)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի</b>	<b>920,134</b>	<b>1,751,827</b>

**(գ) Պահանջների պահուստների շարժի վերլուծություն (ներառյալ վերապահովագրությունը)**

(հազար դրամ)	<u>2014թ.</u>	<u>2013թ.</u>
Փաստացի, սակայն չներկայացված պահանջների մնացորդը առ 1 հունվարի	281,070	155,327
Տեղեկացված պահանջների պահուստի մնացորդը առ 1 հունվարի	442,632	500,616
<b>Պահանջների պահուստի ընդհանուր մնացորդը առ 1 հունվարի</b>	<b>723,702</b>	<b>655,943</b>
Նախորդ տարվա պահանջներին վերաբերող գնահատականների և վճարումների փոփոխություն (Օան. 4)	(221,377)	125,743
Ընթացիկ տարվա պահանջների ակնկալվող ծախսը (Օան. 4)	(237,703)	(57,984)
<b>Պահանջների պահուստի ընդհանուր մնացորդը առ 31 դեկտեմբերի</b>	<b>264,622</b>	<b>723,702</b>
<b>Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների մնացորդը առ 31 դեկտեմբերի</b>	<b>59,693</b>	<b>281,070</b>
<b>Տեղեկացված պահանջների պահուստի մնացորդը առ 31 դեկտեմբերի</b>	<b>204,929</b>	<b>442,632</b>

**18. Փոխառություններ և ստորադաս փոխառություններ**

(հազար դրամ)	<u>31 դեկտեմբերի, 2014թ.</u>	<u>31 դեկտեմբերի, 2013թ.</u>
<b>Փոխառություններ</b>		
Փոխառություններ	-	1,216,920
Հաշվեգրված տոկոս	-	70,987
	-	<b>1,287,907</b>
<b>Ստորադաս փոխառություններ</b>		
Ստորադաս փոխառություններ	949,940	811,280
Հաշվեգրված տոկոս	55,929	47,727
	<b>1,005,869</b>	<b>859,007</b>
<b>Ընդամենը փոխառություններ և ստորադաս փոխառություններ՝</b>	<b>1,005,869</b>	<b>2,146,914</b>

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված կողմերից փոխառությամբ ստացված բոլոր գումարները ստացվել են տարեկան 7% տոկոսադրույքով: Չգեղչված դրամական հոսքերը փոխառությունների գծով, ինչպես նաև արժույթային և ժամկետային վերլուծությունները ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

Մանկացման կամ լուծարման դեպքում Ընկերության ստորադաս փոխառության մարումը ստորադասվում է Ընկերության՝ այլ փոխատուների հանդեպ ունեցած պարտավորություններին:

**19. Ապահովագրության և վերապահովագրության գծով վճարվելիք գումարներ**

(հազար դրամ)	<u>31 դեկտեմբերի, 2014թ.</u>	<u>31 դեկտեմբերի, 2013թ.</u>
Որպես կանխավճար ստացված ապահովագրավճարներ	115,230	125,485
Գործակալներին վճարվելիք գումարներ	56,131	19,324
Վճարվելիք պահանջներ	26,474	93,377
Վերապահովագրության գծով վճարվելիք գումարներ	21,952	21,963
Չեղարկված ապահովագրավճարների գծով վճարվելիք գումարներ	123	47,193
	<b>219,910</b>	<b>307,342</b>

## 20. Այլ պարտավորություններ

(հազար դրամ)	<u>31 դեկտեմբերի, 2014թ.</u>	<u>31 դեկտեմբերի, 2013թ.</u>
Աշխատակիցներին վերաբերող պարտավորություններ	69,096	67,382
Մատակարարներին և կապալառուներին վճարվելիք գումարներ	51,448	45,037
Վճարվելիք արտոնյալ շահաբաժիններ (Ծան. 22)	41,940	125,820
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	29,197	38,397
Հայաստանի ապահովագրողների բյուրոյին վճարվելիք գումարներ	8,601	18,851
Այլ	2,429	86
	<b><u>202,711</u></b>	<b><u>295,573</u></b>

## 21. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ 2014 և 2013 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ժամանակավոր տարբերությունների շարժը 2014 թ.-ի դեկտեմբերի 31-ի և 2013 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև: Հետաձգված հարկերի համար կիրառվող հարկային դրույքը 20% է (2013թ.՝ 20%):

(հազար դրամ)	<u>Ակտիվներ</u>		<u>Պարտավորություններ</u>		<u>Զուտ</u>	
	<u>2014թ.</u>	<u>2013թ.</u>	<u>2014թ.</u>	<u>2013թ.</u>	<u>2014թ.</u>	<u>2013թ.</u>
<b>Ակտիվներ</b>						
Կանխիկ դրամական միջոցներ	-	-	(45)	(141)	(45)	(141)
Բանկում տեղաբաշխված միջոցներ	-	-	(2,968)	(6,992)	(2,968)	(6,992)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	(4,410)	(15,120)	(4,410)	(15,120)
Տրված վարկեր	-	-	(3,899)	(4,935)	(3,899)	(4,935)
Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ	38,186	76,905	-	-	38,186	76,905
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	(7,164)	(5,994)	(7,164)	(5,994)
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	4,887	-	-	-	4,887	-
Այլ ակտիվներ	-	-	(165)	(2,268)	(165)	(2,268)
Հաջորդ ժամանակաշրջաններ փոխադրված հարկային վնասներ	27,105	27,105	-	-	27,105	27,105
<b>Պարտավորություններ</b>						
Ապահովագրության պայմանագրերի պահուստ	-	676	(82,096)	-	(82,096)	676
Այլ պարտավորություններ	10,969	10,264	-	-	10,969	10,264
<b>Զուտ հարկային ակտիվներ/(պարտավորություններ)</b>	<b><u>81,147</u></b>	<b><u>114,950</u></b>	<b><u>(100,747)</u></b>	<b><u>(35,450)</u></b>	<b><u>(19,600)</u></b>	<b><u>79,500</u></b>

2014 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ժամանակավոր տարբերությունների շարժը՝

<b>(հազար դրամ)</b>	<b>Մնացորդը առ 1 հունվարի 2014 թ.</b>	<b>Շահույթում կամ վնասում ճանաչված</b>	<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.</b>
<b>Ակտիվներ</b>			
Կանխիկ դրամական միջոցներ	(141)	96	(45)
Բանկում տեղաբաշխված միջոցներ	(6,992)	4,024	(2,968)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	(15,120)	10,710	(4,410)
Տրված վարկեր	(4,935)	1,036	(3,899)
Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ	76,905	(38,719)	38,186
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(5,994)	(1,170)	(7,164)
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	-	4,887	4,887
Այլ ակտիվներ	(2,268)	2,103	(165)
Հաջորդ ժամանակաշրջաններ փոխադրված հարկային վնասներ	27,105	-	27,105
<b>Պարտավորություններ</b>			
Ապահովագրության պայմանագրերի պահուստ	676	(82,772)	(82,096)
Այլ պարտավորություններ	10,264	705	10,969
<b>Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)</b>	<b>79,500</b>	<b>(99,100)</b>	<b>(19,600)</b>

2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ժամանակավոր տարբերությունների շարժը`

<b>(հազար դրամ)</b>	<b>Մնացորդը առ 1 հունվարի 2013 թ.</b>	<b>Շահույթում կամ վնասում ճանաչված</b>	<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.</b>
<b>Ակտիվներ</b>			
Կանխիկ դրամական միջոցներ	(120)	21	(141)
Բանկում տեղաբաշխված միջոցներ	(3,301)	(3,691)	(6,992)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	(15,120)	(15,120)
Տրված վարկեր	7,623	(12,558)	(4,935)
Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ	28,702	48,203	76,905
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	(5,994)	(5,994)
Այլ ակտիվներ	1,040	(3,308)	(2,268)
Հաջորդ ժամանակաշրջաններ փոխադրված հարկային վնասներ	-	27,105	27,105
<b>Պարտավորություններ</b>			
Ապահովագրության պայմանագրերի պահուստ	(50,293)	50,969	676
Ապահովագրության և վերաապա- հովագրության գծով վճարվելիք գումարներ	8,935	(8,935)	-
Այլ պարտավորություններ	8,014	2,250	10,264
<b>Զուտ հետաձգված հարկային ակտիվ</b>	<b>600</b>	<b>78,900</b>	<b>79,500</b>



## 22. Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկված բաժնետիրական կապիտալը կազմված է 1,404 հազար սովորական և 466 հազար արտոնյալ բաժնետոմսերից: Բոլոր բաժնետոմսերն ունեն 1,000,000 ՀՀ դրամ անվանական արժեք: Ընդհանուր բաժնետիրական կապիտալը կազմում է 1,870,000 հազար ՀՀ դրամ 2014թ և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Բոլոր բաժնետոմսերը լիազորվել, թողարկվել և ամբողջովին վճարվել են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

### Սովորական բաժնետոմսեր

Բոլոր սովորական բաժնետոմսերը դասկարգվում են համարժեք հիմունքով Ընկերության մնացորդային ակտիվների գծով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն սկզբունքով:

### Հետ չգնվող արտոնյալ բաժնետոմսեր

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք չունեն փոխարկել կամ հետ գնել բաժնետոմսերը, սակայն իրավունք ունեն ստանալ անվանական արժեքի 9%-ի չափով տարեկան շահաբաժիններ: Եթե շահաբաժինը չի վճարվում, ապա արտոնյալ բաժնետոմսերը տալիս են քվեարկելու իրավունք մինչև բաժնետերերի հաջորդ տարեկան ժողովը:

Լուծարման դեպքում արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն առաջինն են ստանում հայտարարված չվճարված շահաբաժինները և արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը: Այնուհետև, բոլոր բաժնետերերը՝ սովորական և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը հավասարապես մասնակցում են մնացած ակտիվների բաշխմանը:

### Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Ընկերության չբաշխված շահույթի առավելագույն չափով: ՀՀ օրենսդրության համաձայն Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ չունեն բաշխման ենթակա պահուստներ:

2014թ. սեպտեմբերին արտոնյալ բաժնետերերին 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեգրված կուտակային շահաբաժիններից վճարվել են շահաբաժիններ՝ 125,820 հազար դրամի չափով: Արտոնյալ բաժնետոմսերի տնօրինողներն իրավունք ունեն ստանալ տարեկան շահաբաժին 41,940 հազար դրամի չափով, որը արտացոլված է այլ պարտավորություններում (Ծան. 20):

## 23. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է ապահովագրական գործունեության համար և Ընկերության գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, որը ներառում է փոխարժեքի, տոկոսադրույքի, բաժնետոմսերի գնի հետ կապված ռիսկերը, ինչպես նաև արտարժույթի ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Ընկերությունը:

**(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր**

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ընկերության Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի համար: Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման ու վերահսկման ընթացակարգերի մշակման և ներդրման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Ընկերության կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում:

**(բ) Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

**(i) Տոկոսադրույքի ռիսկ**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության տոկոսակիր ակտիվները և պարտավորությունները 2014 և 2013թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքներն այդ ամսաթվի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

(հազար դրամ)	2014թ.		2013թ.	
	Հաշվեկշռային արժեք	Միջին արդյունավետ տոկոսադրույք	Հաշվեկշռային արժեք	Միջին արդյունավետ տոկոսադրույք
<b>Տոկոսակիր ակտիվներ</b>				
<i>Բանկերում տեղաքաշխված միջոցներ</i>				
- ՀՀ դրամով	429,991	12.83%	1,295,127	12.10%
- ԱՄՆ դոլարով	1,053,763	7.78%	2,200,626	9.00%
<i>Տրված վարկեր</i>				
- ՀՀ դրամով	54,221	16.62%	53,492	15.72%
<i>Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ</i>				
<i>Չգրավադրված</i>				
- ՀՀ դրամով	715,819	11.59%	210,767	13.83%
<i>Գրավադրված</i>				
- ՀՀ դրամով	397,347	11.59%	916,934	13.83%
<b>Տոկոսակիր պարտավորություններ</b>				
<i>Վճարվելիք գումարներ հետգնման համաձայնագրերով</i>				
- ՀՀ դրամով	394,434	24.00 %	898,344	9.75 %
<i>Փոխառություններ և ստորադաս փոխառություններ</i>				
- ԱՄՆ դոլարով	1,005,869	7.00%	2,146,914	7.00%

Տոկոսադրույքի ռիսկը Ընկերության եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է տոկոսադրույքների փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է, երբ որոշակի ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսվող ակտիվներն ավելի կամ պակաս են նույն ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսվող պարտավորություններից:

*Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն*

Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի փոփոխության (վերազնորոշման ռիսկի) նկատմամբ նախքան հարկումը շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 տոկոսային կետով (տկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2014 և 2013 թթ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
100 տկ զուգահեռ աճ	12,240	17,161
100 տկ զուգահեռ նվազում	(12,240)	(17,161)

Ընկերության կանխատեսվող տարվա շահույթի զգայունության, իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխության վերլուծությունը, կախված 2014 և 2013 թթ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող տոկոսադրույքների և եկամտաբերության կորի 100 տոկոսային կետի (տկ) հավասարաչափ աճի կամ նվազման պարզեցված սցենարից հետևյալն է՝

<b>(հազար դրամ)</b>	<b>2014թ.</b>	<b>2013թ.</b>
100 տկ գույքահեռ աճ	(3,652)	(13,430)
100 տկ գույքահեռ նվազում	3,337	13,663

**(ii) Արժույթային ռիսկ**

Ընկերությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսվող ակտիվներն ավելի կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսվող պարտավորություններից:

Սույն աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<b>(հազար դրամ)</b>	<b>ՀՀ դրամ</b>	<b>ԱՄՆ դոլար</b>	<b>Եվրո</b>	<b>Ընդամենը</b>
<b>Ֆինանսական ակտիվներ</b>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,056	490	20	22,566
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	429,991	1,053,763	-	1,483,754
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	1,113,166	-	-	1,113,166
Տրված վարկեր	54,221	-	-	54,221
Ապահովագրությունից և վերապահովագրությունից ստացվելիք գումարներ	826,938	4,599	-	831,537
Վերապահովագրողների բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստներում	5,635	-	-	5,635
Այլ ակտիվներ	7,415	4,435	-	11,850
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>2,459,422</b>	<b>1,063,287</b>	<b>20</b>	<b>3,522,729</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>				
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ	262,601	211	1,810	264,622
Վճարվելիք գումարներ հետգնման համաձայնագրերով	394,434	-	-	394,434
Ապահովագրության և վերապահովագրության գծով վճարվելիք գումարներ	215,478	5	4,435	219,910
Այլ պարտավորություններ	202,613	37	61	202,711
Փոխառություններ և ստորադաս փոխառություններ	-	1,005,869	-	1,005,869
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>1,075,126</b>	<b>1,006,122</b>	<b>6,306</b>	<b>2,087,955</b>
<b>Զուտ ֆինանսական դիրք 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,383,896</b>	<b>57,165</b>	<b>(6,286)</b>	<b>1,435,774</b>

Սույն աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<b>(հազար դրամ)</b>	<u>ՀՀ դրամ</u>	<u>ԱՄՆ դոլար</u>	<u>Եվրո</u>	<u>Ընդամենը</u>
<b>Ֆինանսական ակտիվներ</b>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	69,542	1,037	59	70,638
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	1,295,128	2,200,625	-	3,495,753
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող Ֆինանսական գործիքներ	1,127,701	-	-	1,127,701
Տրված վարկեր	53,492	-	-	53,492
Ապահովագրությունից և վերաապահովագրությունից ստացվելիք գումարներ	1,350,159	4,015	-	1,354,174
Վերաապահովագրողների բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստներում	6,029	-	-	6,029
Այլ ակտիվներ	20,443	4,952	-	25,395
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>3,922,494</b>	<b>2,210,629</b>	<b>59</b>	<b>6,133,182</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>				
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ	719,139	-	4,563	723,702
Վճարվելիք գումարներ հետգնման համաձայնագրերով	898,344	-	-	898,344
Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ	307,283	1	58	307,342
Փոխառություններ և ստորադաս փոխառություններ	-	2,146,914	-	2,146,914
Այլ պարտավորություններ	255,502	-	1,588	257,090
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>2,180,268</b>	<b>2,146,915</b>	<b>6,209</b>	<b>4,333,392</b>
<b>Զուտ ֆինանսական դիրք 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,742,226</b>	<b>63,714</b>	<b>(6,150)</b>	<b>1,799,790</b>

Ստորև ներկայացվում է արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ Ընկերության՝ հարկումից հետո շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի և ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքի 20% փոփոխության պարզեցված սցենարի հիման վրա:

<b>(հազար դրամ)</b>	<u>2014թ.</u>	<u>2013թ.</u>
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 20% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	9,146	10,195
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 20% արժեզրկում ՀՀ դրամի նկատմամբ	(9,146)	(10,195)
Եվրոյի փոխարժեքի 20% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	(1,005)	(986)
Եվրոյի փոխարժեքի 20% արժեզրկում ՀՀ դրամի նկատմամբ	1,005	986

**(գ) Վարկային ռիսկ**

Ֆիքսված եկամուտով արժեթղթերի պորտֆելը, բանկերում տեղաբաշխված միջոցները, ընթացիկ հաշիվները, ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք միջոցները և տրամադրված վարկերը ենթարկվում են վարկային ռիսկի: Վարկային ռիսկը հնարավոր վնաս կրելու ռիսկն է փոխառուի կողմից պարտքը մարելու անկարողության պատճառով: Ընկերության

նպատակն է վաստակել բավարար եկամուտ արժեթղթերի դիվերսիֆիկացված պորտֆելում ներդրումներ կատարելու միջոցով: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է միայն պետական արժեթղթեր գնելու միջոցով:

Ընկերությունը վերաապահովագրում է որոշ ռիսկեր վերաապահովագրական ընկերություններում: Վերաապահովագրական ընկերություն ընտրելիս հաշվի է առնվում վճարունակությունը և հուսալիությունը և պակաս չափով՝ դիվերսիֆիկացիան (ռիսկի տարածումը պայմանագրային կողմերի միջև):

Ընկերությունն ունի նաև այլ դեբիտորական պարտքերի մնացորդներ, որոնք կարող են ենթարկվել վարկային ռիսկի: Այս դեբիտորական պարտքերից ամենաեականները գործակալներից ստացվելիք գումարներն ու ստացվելիք ապահովագրավճարներն են: Ապահովադիրներից գումարները չստանալու ռիսկը նվազեցնելու համար ապահովագրության պայմանագրում ներառվում է դրույթ, համաձայն որի ապահովագրության պայմանագիրը չեղարկվում է ապահովագրավճարը սահմանված ամսաթվին չվճարելու դեպքում:

Բանկերում տեղաբաշխված միջոցների հետ կապված վարկային ռիսկը նվազեցնելու համար Ընկերությունը կատարում է տարաբնույթ տեղաբաշխումներ և հիմնականում ներդրումներ Հայաստանի այն բանկերում, որոնց վճարունակությունը դեկավարության կողմից գնահատվում է որպես բարձր:

Ընկերությունը կանոնավոր կերպով վերահսկում է իր ենթարկվածությունը վարկային ռիսկին: Վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում:

Ընկերության առավելագույն ենթարկվածությունը վարկային ռիսկին ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

<b>(հազար դրամ)</b>	<b>2014թ.</b>	<b>2013թ.</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,513	70,585
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	1,483,754	3,495,753
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող		
ֆինանսական գործիքներ	1,113,166	1,127,701
Տրված վարկեր	54,221	53,492
Ապահովագրությունից և վերաապահովագրությունից ստացվելիք գումարներ	831,537	1,354,174
Վերաապահովագրողների բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստներում	5,635	6,029
Այլ ակտիվներ	11,850	25,395
	<b>3,522,676</b>	<b>6,133,129</b>

**(դ) Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ պարտավորությունները կատարելիս: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է ֆինանսական կազմակերպությունների՝ ներառյալ Ընկերության իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝

պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Ընկերության իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ղեկավարության կողմից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ պայմանագրով սահմանված մարման ժամկետի 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(հազար դրամ)	<u>Մինչև 1 տարի</u>	<u>1 -ից 5 տարի</u>	<u>5 տարուց ավել</u>	<u>Առանց ժամկետայնության</u>	<u>Ընդամենը</u>
<b>Ակտիվներ</b>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,566	-	-	-	22,566
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	1,483,754	-	-	-	1,483,754
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	1,113,166	-	-	-	1,113,166
Տրված վարկեր	27,483	26,738	-	-	54,221
Ապահովագրությունից և վերաապահովագրությունից ստացվելիք գումարներ	831,537	-	-	-	831,537
Վերաապահովագրողների բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստներում	5,635	-	-	-	5,635
Այլ ակտիվներ	11,810	-	-	-	11,810
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b><u>3,495,951</u></b>	<b><u>26,738</u></b>	<b><u>-</u></b>	<b><u>-</u></b>	<b><u>3,522,689</u></b>
<b>Պարտավորություններ</b>					
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ	264,622	-	-	-	264,622
Վճարվելիք գումարներ հետգնման համաձայնագրերով	394,434	-	-	-	394,434
Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ	219,910	-	-	-	219,910
Այլ պարտավորություններ	202,711	-	-	-	202,711
Ստորադաս փոխառություններ	65,779	940,090	-	-	1,005,869
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b><u>1,147,456</u></b>	<b><u>940,090</u></b>	<b><u>-</u></b>	<b><u>-</u></b>	<b><u>2,087,546</u></b>
<b>Զուտ դիրք 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b><u>2,348,495</u></b>	<b><u>(913,352)</u></b>	<b><u>-</u></b>	<b><u>-</u></b>	<b><u>1,435,143</u></b>

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ պայմանագրով սահմանված մարման ժամկետի 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<b>(հազար դրամ)</b>	<b>Մինչև 1 տարի</b>	<b>1 -ից 5 տարի</b>	<b>5 տարուց ավել</b>	<b>Առանց ժամկետայնության</b>	<b>Ընդամենը</b>
<b>Ֆինանսական ակտիվներ</b>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	70,638	-	-	-	70,638
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	3,495,753	-	-	-	3,495,753
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	76,751	1,050,950	-	-	1,127,701
Տրված վարկեր	43,972	9,520	-	-	53,492
Ապահովագրության և վերապահովագրության գծով ստացվելիք գումարներ	1,354,174	-	-	-	1,354,174
Վերապահովագրողների բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստներում	6,029	-	-	-	6,029
Այլ ակտիվներ	20,443	4,952	-	-	25,395
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>5,067,760</b>	<b>1,065,422</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>6,133,182</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>					
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ	723,702	-	-	-	723,702
Վճարվելիք գումարներ հետգնման համաձայնագրերով	898,344	-	-	-	898,344
Ապահովագրության և վերապահովագրության գծով վճարվելիք գումարներ	307,342	-	-	-	307,342
Փոխառություններ և ստորադաս փոխառություններ	1,335,633	811,281	-	-	2,146,914
Այլ պարտավորություններ	257,090	-	-	-	257,090
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>3,522,111</b>	<b>811,281</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>4,333,392</b>
<b>Զուտ դիրք 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,545,649</b>	<b>254,141</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>1,799,790</b>

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորություններն ըստ իրենց պայմանագրային մարման ժամկետների մնացորդների 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով դրանց ամենավաղ հնարավոր մարման ժամկետների վրա հիմնված չգեղջված դրամական հոսքերը:



(հազար դրամ)	Մինչև 1 տարի	1 -ից 5 տարի	5 տարուց ավել	Առանց ժամկետայնության	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>						
Ապահովագրական պայմանագրերի պահուստներ	264,622	-	-	-	264,622	264,622
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	394,909	-	-	-	394,909	394,434
Վճարման ենթակա գումարներ ապահովագրության և վերապահովագրության գծով	219,910	-	-	-	219,910	219,910
Ստորադաս փոխառություններ	66,496	1,149,427			1,215,923	1,005,869
Այլ պարտավորություններ	202,711	-	-	-	202,711	202,711
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>1,148,648</b>	<b>1,149,427</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>2,298,075</b>	<b>2,087,546</b>

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորություններն ըստ իրենց պայմանագրային մարման ժամկետների մնացորդների 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով դրանց ամենավաղ հնարավոր մարման ժամկետների վրա հիմնված չգեղջված դրամական հոսքերը:

(հազար դրամ)	Մինչև 1 տարի	1 -ից 5 տարի	5 տարուց ավել	Առանց ժամկետայնության	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
Ապահովագրական պայմանագրերի պահուստներ	723,702	-	-	-	723,702	723,702
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	900,775	-	-	-	900,775	898,344
Վճարման ենթակա գումարներ ապահովագրության և վերապահովագրության գծով	307,342	-	-	-	307,342	307,342
Փոխառություններ և ստորադաս փոխառություններ	1,358,894	1,038,438	-	-	2,397,332	2,146,914
Այլ պարտավորություններ	257,090	-	-	-	257,090	257,090
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>3,547,803</b>	<b>1,038,438</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>4,586,241</b>	<b>4,333,392</b>

## 24. Ապահովագրական ռիսկի կառավարում

### (ա) Ռիսկի կառավարման նպատակները և ապահովագրական ռիսկի նվազեցման քաղաքականությունը

Ընկերության կողմից իրականացվող հիմնական ապահովագրական գործունեությունը ենթադրում է վնաս կրելու ռիսկ անհատների և կազմակերպությունների հետ իրականացվող գործառնություններից, որոնք ուղղակիորեն ենթարկվում են ռիսկին: Նման ռիսկերը կարող են վերաբերել գույքին, պարտավորություններին, դժբախտ պատահարներին, առողջությանը, բեռնափոխադրումներին և այլ վտանգներին, որոնք կարող են առաջանալ ապահովագրվող պատահարից: Արդյունքում, Ընկերության համար ռիսկի գործոն է հանդիսանում անորոշությունը, որը կապված է ապահովագրության պայմանագրի պահանջների ժամկետների և բարդության հետ: Հիմնական ռիսկը կայանում է նրանում, որ պահանջների հաճախականությունը և բարդությունը կարող է նախատեսվածից ավելի մեծ լինել: Ապահովագրվող պատահարները բնույթով հազվադեպ են, և մեկ տարվա ընթացքում պատահարների փաստացի քանակը և չափը տարբերվում են ընդունված վիճակագրական մեթոդով գնահատվածներից:

Ընկերությունն ապահովագրական ռիսկը կառավարում է ընդունված վիճակագրական մեթոդների, ռիսկերի կենտրոնացման վերապահովագրման, անդերրայթինգի սահմանաչափերի, գործառնությունների հաստատման ընթացակարգերի, գնորդման ուղեցույցների և առաջացող հիմնահարցերի վերահսկման միջոցով:

### (i) Անդերրայթինգի ռազմավարություն

Ընկերության անդերրայթինգի ռազմավարության նպատակը դիվերսիֆիկացիայի ապահովումն է, որի արդյունքում Ընկերության պորտֆելը ցանկացած պահի կներառի չփոխկապակցվող ռիսկերի բազմաթիվ դասեր, և ռիսկի յուրաքանչյուր դասը, իր հերթին, անդրադարձ կգտնի մեծ քանակությամբ ապահովագրության պայմանագրերում: Ղեկավարությունը գտնում է, որ այս մոտեցումը նվազեցնում է փոփոխական արդյունքի հնարավորությունը:

Անդերրայթինգի ռազմավարությունը ներկայացվում է գործարար ծրագրում, որը սահմանում է ապահովագրման ենթակա բիզնեսի դասերը և ենթադասերը, ինչպես նաև տարածքը, որտեղ բիզնեսը պետք է ապահովագրվի: Ռազմավարությունն իրականացվում է անդերրայթինգի ուղեցույցների միջոցով, որոնք սահմանում են անդերրայթինգի մանրամասն կանոններ ծառայությունների յուրաքանչյուր տեսակի համար: Ուղեցույցներն անդրադառնում են ապահովագրություն հասկացությանը, համապատասխան ընթացակարգերին, ռիսկերի նկարագրերին, պայմաններին, իրավունքներին և պարտականություններին, փաստաթղթավորման պահանջներին, պայմանագրերի ձևերին/քաղաքականությունների օրինակներին, կիրառելի սակագների հիմնավորմանը և կիրառելի սակագների վրա ազդող գործոններին:

Սակագների հաշվարկն իրականացնելիս հիմք են ընդունվում շահութաբերությունը և տատանումները, կորստի հարաբերակցությունը, պայմանական դեպքերի, ծախսերի և շահույթի հավանականության նախատեսումը:

Անդերրայթինգի ուղեցույցների պահպանումը կանոնավոր կերպով վերահսկվում է ղեկավարության կողմից:

**(ii) Վերաապահովագրության ռազմավարություն**

Ընկերությունը վերաապահովագրում է անդերրայթինգի ենթարկվող ռիսկերի մի մասը՝ վնասներ կրելու ռիսկը կառավարելու և կապիտալի ռեսուրսների անվտանգությունն ապահովելու նպատակով: Ընկերությունը հիմնականում գնում է ֆակուլտատիվ, քվոտային վերաապահովագրություն կամ ավելցուկի վերաապահովագրություն, ինչը թույլ է տալիս նվազեցնել ռիսկը յուրաքանչյուր առանձին պայմանագրի համար կամ որոշ այլ սահմանված հանգամանքներում՝ կախված գործունեության ոլորտից:

Վերաապահովագրության փոխանցված պայմանագրերը ներառում են վարկային ռիսկ կապված վերաապահովագրության պայմանագրերից, ինչպես նաև վերաապահովագրողների կանոններից և նախասիրություններից: Ընկերությունը կանոնավոր կերպով վերահսկում է վերաապահովագրվողների ֆինանսական վիճակը և պարբերաբար վերանայում է վերաապահովագրության պայմանները:

Ընկերությունը չի կիրառում վնասի սահմանափակմանն ուղղված վերաապահովագրություն:

**(բ) Ապահովագրության պայմանագրի դրույթները և պայմանները և ներառվող ռիսկերի բնույթը**

Ստորև ներկայացված են ապահովագրության պայմանագրերի այն պայմանները, որոնք էական ազդեցություն ունեն ապահովագրության պայմանագրերից առաջացող դրամական միջոցների ապագա հոսքերի ժամկետների և անորոշության վրա: Ի լրումն, ստորև ներկայացվածը թույլ է տալիս գնահատել Ընկերության հիմնական ծառայությունները և հարակից ռիսկերի կառավարման Ընկերության մեթոդները:

**(i) Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն**

***Ծառայության առանձնահատկությունները***

Ընկերության ապահովագրական պորտֆելի 8%-ը 2014 թվականի ընթացքում վերաբերում է ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությանը ներառյալ ամբողջական համապարփակ ապահովագրություն (Կասկո), ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ): Կասկո պայմանագրերով կազմակերպություններին և անհատներին փոխհատուցվում է փոխադրամիջոցների հետ կապված կրած կամ դրանց հասցված վնասը: ԱՊՊԱ պայմանագրերով փոխադրամիջոցի սեփականատիրոջը փոխհատուցվում են այն գումարները, որոնք նա վճարում է երրորդ անձանց գույքը վնասելու, մահվան կամ վնասվածքների դեպքում: Այդ իսկ պատճառով, ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը ներառում է համապատասխանաբար կարճ ու երկար ժամանակաշրջան ապահովագրական գումարի ստացման և հատուցման վճարման միջև:

Որպես կանոն առավել արագ վճարվում են այն պահանջները, որոնք փոխհատուցում են ապահովադիրին մեքենայի ֆիզիկական վնասվածքի արդյունքում կրած վնասը: Պահանջները, որոնց վճարումն առավել երկար ժամանակ է պահանջում և որոնք առավել դժվար գնահատելի են, վերաբերում են մարմնական վնասվածքների հատուցումներին:

***Ռիսկերի կառավարումը***

Որպես կանոն, ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն հետ կապված պահանջները ներկայացվում են ոչ մեծ հետաձգումներով, և պահանջների բարդությունը

համեմատաբար մեծ չէ: Ընդհանուր առմամբ գործունեության այս ոլորտի պահանջների պարտավորություններն առաջացնում են միջին չափի ռիսկ: Ընկերությունը վերահսկում է և արձագանքում է վերանորոգման ծախսերի, վնասվածքների փոխհատուցման, գողությունների հաճախականության և դժբախտ պատահարների հետ կապված պահանջների շարժին ու միտումների փոփոխություններին:

Պահանջների ներկայացման հաճախականության վրա ազդում են անբարենպաստ եղանակային պայմանները, պահանջների քանակն ավելի մեծ է լինում ձմռան ամիսներին:

Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության տեսակները ենթարկվում են աղերքային գի ելնելով դժբախտ պատահարների վիճակագրական տվյալներից: Ընկերությունը վերաապահովագրում է Կասկո ռիսկերը քվոտային վերաապահովագրության միջոցով, որի արդյունքում ընկերությունը յուրաքանչյուր ապահովագրական դեպքի համար սահմանափակում է վերջանական գուտ վնասի 30%-ի չափով:

### **(ii) Առողջության ապահովագրություն**

#### ***Ծառայության առանձնահատկությունները***

Ընկերության ապահովագրական պորտֆելի 0.32%-ը 2014 թվականի ընթացքում վերաբերվում է առողջության ապահովագրությանը: Այս պայամանգրերով Ընկերությունը փոխհատուցում է բուժման և հիվանդանոցի ծախսերը: Այս պորտֆելը ներառում է թե անհատների ապահովագրության և թե կազմակերպությունների կորպորատիվ ապահովագրության փաթեթները: Ընկերությունն ակտիվ չի խթանում անհատների առողջության ապահովագրության պայմանագրերը՝ խուսափելով ապահովագրվածի բացասական ընտրությունից:

#### ***Ռիսկերի կառավարումը***

Առողջության ապահովագրությունը կախված է բուժման անհրաժեշտության առաջացումից: Ընկերությունը վերահսկում է իր ռիսկերը կորպորատիվ ռազմավարության առանձնահատկությունների և բժշկական ստուգման միջոցով, արդյունքում, գները որոշելիս հաշվի են առնվում ապահովագրվողի ներկա առողջական վիճակը և ընտանիքի բժշկական պատմությունը:

### **(iii) Պարտադիր բժշկական ապահովագրություն**

#### ***Ծառայության առանձնահատկությունները***

2014թ. ընթացքում Ընկերության ապահովագրական պորտֆելի 1.9% կազմում է պարտադիր բժշկական ապահովագրությունը: Մա ներկայացնում է այս ապահովագրատեսակի մնացորդայն ազդեցությունը, քանի որ ընկերությունը դադարեցրել է այս գործունեության ուղղությունը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում տեղի ունեցած փոփոխություններից:

### **Ռիսկերի կառավարումը**

Պարտադիր բժշկական ապահովագրությունը մշակվել է Կառավարության կողմից՝ ապահովագրական ընկերությունների միջնորդությամբ: Փաթեթը չի կարող փոփոխվել ապահովագրական ընկերության կողմից: Օգտագործելով ապահովագրական հատուցման բացառությունները, Ընկերությունը մշակում է լրացուցիչ փաթեթներ, որոնք ուղղված են ռիսկերի վերահսկողության մեխանիզմներին: Բացի այդ, Ընկերությունն ակտիվորեն զբաղվում է պետական մարմինների աշխատակիցների շրջանում կոլլեկտիվ ապահովագրության առաջխաղացմամբ՝ ապահովագրողների ոչ ճիշտ շրջանակի ընտրությունից խուսափելու համար:

### **(iv) Գույքի ապահովագրություն**

#### **Ծառայության առանձնահատկությունները**

Ընկերությունը կատարում է գույքի ապահովագրություն: Այս ծառայությունը ներառում է ինչպես անձնական, այնպես էլ՝ արտադրական գույքի ապահովագրություն: Գույքի ապահովագրությունը փոխատուցում է ապահովագրիչին, որոշակի սահմանափակումներով կամ ավելցուկներով, նյութական գույքին հասցված կամ դրա հետ կապված կրած վնասը:

Շենքերին կամ դրանց պարունակությանը հասցված վնասի փոխհատուցման պահանջի համար հիմք հանդիսացող պատահարը սովորաբար հանկարծակի է տեղի ունենում (հրդեհ և անօրինական ներխուժում) և պատճառը հեշտ որոշելի է: Այդպիսով, պահանջը ներկայացվում է կարճ ժամկետներում և կարող է վճարվել առանց հետաձգումների: Այդ իսկ պատճառով, գույքի ապահովագրությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ:

### **Ռիսկերի կառավարումը**

Ծառայության հետ կապված հիմնական ռիսկերն են անդերրայթինգի ռիսկը, մրցակցության ռիսկը և պահանջների ներկայացման ռիսկը (ներառյալ բնական աղետների տարածքների ազդեցության փոփոխական տարածքները): Գույքի ապահովագրության հետ կապված Ընկերությունը ենթարկվում է նաև այնպիսի ռիսկի, որը կարող է առաջանալ պահանջներ ներկայացնողների կողմից կորստի չափի արհեստականորեն մեծացման կամ անբարեխիղճ վարքի դեպքում:

Անդերրայթինգի ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը չի հավաքագրի անհրաժեշտ ապահովագրավճարներն իր կողմից ապահովագրված տարբեր գույքերի գծով: Անձնական գույքի ապահովագրության դեպքում ակնկալվում է, որ առկա կլինեն համանման ռիսկ ներառող գույքի մեծ թվով տեսակներ: Այնուամենայնիվ, այս մոտեցումը չի գործում կոմերցիոն բիզնեսի համար: Կոմերցիոն գույքի համար ներկայացվող առաջարկները ներառում են վայրի, գործունեության տեսակի և անվտանգության միջոցառումների յուրահատուկ համադրությունը: Այս ռիսկերին համաչափ ապահովագրավճարների հաշվարկը սուբյեկտիվ է, այսպիսով նաև՝ ռիսկային:

Այս ռիսկերը հիմնականում կառավարվում են գնագոյացման և վերաապահովագրության միջոցով: Ընկերությունը կիրառում է անդերրայթինգի խիստ չափանիշներ՝ վնաս կրելու ռիսկն Ընկերության համար ընդունելի դարձնելու համար:

Ընկերությունը վերաապահովագրում է գույքի ապահովագրման հետ կապված ռիսկերն ավելցուկի վերաապահովագրության միջոցով, որը սահմանափակում է Ընկերության վնասի չափը մինչև 60,000 հազար դրամը յուրաքանչյուր անաձին ռիսկի համար:

**(v) Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասանատվության պարտադիր ապահովագրություն**

**Ծառայության առանձնահատկությունները**

2011 թվականի հունվարին հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրեց ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասանատվության պարտադիր ապահովագրությունը: Ապահովագրության այս տեսակը կարգավորվում է Կառավարության կողմից ապահովագրավճարների հաշվարկման տոկոսադրույքների և ծածկույթի մասով: Ընկերության ապահովագրական պորտֆելի 76.67% ը 2014 թվականի ընթացքում վերաբերվում է ԱՊՊԱ-ին: Այս պայմանագրերը տրամադրում են հատուցում փոխադրամիջոցի սեփականատիրոջ կողմից երրորդ անձանց գույքը վնասելու, մահվան կամ վնասվածքների դեպքում: Այդ իսկ պատճառով ԱՊՊԱ-ի ծածկույթը ներառում է համապատասխանաբար կարճ ու երկար ժամանակաշրջան: Որպես կանոն առավել արագ վճարվում են այն պահանջները, որոնք փոխհատուցում են ապահովադիրին մեքենայի ֆիզիկական վնասվածքի արդյունքում կրած վնասը: Պահանջները, որոնց վճարումն առավել երկար ժամանակ է պահանջում և որոնք առավել դժվար գնահատելի են, վերաբերում են մարմնական վնասվածքների հատուցումներին:

**Ապահովագրական ռիսկի կենտրոնացում**

Ընկերության ապահովագրական ռիսկի առանցքային ասպեկտը ապահովագրական ռիսկի կենտրոնացումն է, որը կարող է առաջանալ, երբ առանձին պատահարը կամ պատահարների շարքը կարող է զգալի ազդեցություն ունենալ Ընկերության պարտավորությունների վրա: Նման կենտրոնացումները կարող են առաջանալ ապահովագրության մեկ առանձին պայմանագրից կամ համանման ռիսկային առանձնահատկություններով մի շարք փոխկապակցված պայմանագրերից և վերաբերում այն հանգամանքներին, որոնք կարող են տեղիք տալ զգալի պարտավորությունների: Ապահովագրական ռիսկի կենտրոնացման կարևոր առանձնահատկությունն է, որ դա կարող է առաջանալ մի շարք առաձին դասերի կամ պայմանագրերի շարքի հետ կապված ռիսկերի կուտակումից:

Ռիսկերի կենտրոնացումը կարող է առաջանալ բարդ հետևանքներով, փոքր հաճախականությամբ պատահարներից, այդ թվում՝ բնական աղետներից և այնպիսի իրավիճակներում, որտեղ անդերրայթինգն ուղղված է առանձին խմբին, օրինակ՝ առանձին աշխարհագրական տարածաշրջանին:

Այս ռիսկերի կառավարման համար Ընկերության կողմից կիրառվող հիմնական մեթոդները երկու կողմ ունեն: Առաջինը, ռիսկը կառավարվում է համապատասխան անդերրայթինգի միջոցով: Անդերրայթերներին չի թույլատրվում անդերրայթինգի ենթարկել ռիսկերը, եթե ակնկալվող շահույթը համաչափ չէ ենթադրվող ռիսկերին: Երկրորդը, ռիսկը կառավարվում է վերաապահովագրության միջոցով: Ընկերությունը ձեռք է բերում վերաապահովագրություն ավտոտրանսպորտային միջոցների և գույքի ապահովագրման իր տարբեր դասերի համար: Ընկերությունը կանոնավոր կերպով գնահատում է վերաապահովագրության հետ կապված ծախսերը և օգուտները:

**(գ) Վերաապահովագրական ռիսկ**

Ընկերությունը փոխանցում է ապահովագրական ռիսկը անհատական և պորտֆելի ռիսկերը ներառող բազմաթիվ պայմանագրերի գծով անդերրայթինգի հետ կապված վնասը սահմանափակելու համար: Վերաապահովագրության այս պայմանագրերը տարածում են ռիսկը և նվազագույնի են հասցնում վնասի հետևանքները: Յուրաքանչյուր ռիսկի գումարը կախված է

առանձին ռիսկի Ընկերության գնահատականից, սակայն, ամեն դեպքում, չի գերազանցում 60,000 հազար դրամը ցանկացած պայմանագրի համար:

Վերաապահովագրության պայմանագրերի պայմաններով վերաապահովագրողը համաձայնվում է փոխհատուցել փոխանցված գումարը պահանջը վճարելու դեպքում: Այնուամենայնիվ, Ընկերությունը շարունակում է պարտավորություն կրել իր ապահովադիրների առջև փոխանցված ապահովագրության հետ կապված, եթե վերաապահովագրողին չհաջողվի կատարել ստանձնած պարտականությունները:

Վերաապահովագրողին ընտրելիս Ընկերությունը հաշվի առնում դրանց վճարունակությունը: Վերաապահովագրողի վճարունակությունը գնահատվում է հասարակական վարկանիշային և ներքին հետազոտությունների արդյունքում ձեռքբերված տվյալների հիման վրա:

#### **(դ) Պահանջների զարգացում**

Պահանջների զարգացման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվում է Ընկերության ապահովագրական ռիսկը լուսաբանելու նպատակով: Աղյուսակներում համեմատվում են պատահարի տարվա ընթացքում վճարված պահանջներն այդ պահանջների գծով ձևավորված պահուստների հետ: Աղյուսակի վերին մասում ներկայացվում է կուտակային պահանջների ներկա գնահատականը և ցուցադրվում են գնահատված պահանջների փոփոխությունները հետագա հաշվետու տարում կամ պատահարի տարվա վերջում: Գնահատված գումարը ավելանում կամ նվազում է վնասների վճարմանը զուգահեռ, և երբ ավելի մեծ ծավալով տեղեկատվություն է հայտնի դառնում չվճարված պահանջների բարդության ու հաճախականության մասին: Աղյուսակի ստորին մասում ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված ընդհանուր պահուստի և կուտակային պահանջների գնահատականի համադրումը:

Այս բաժինը ներառում է նաև առանձին պահանջների զարգացման աղյուսակները Ընկերության ապահովագրության գործունեության հիմնական դասակարգերի համար:

Թեև աղյուսակներում բերվող տեղեկատվությունը ներկայացնում է չվճարված պահանջների գնահատականի համարժեքությունն անցյալի փորձի տեսանկյունից, ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները նախագուշակում են ներկա չվճարված վնասի մնացորդի վրա նախկին ավելցուկի կամ պակասորդի էքստրապոլյացիայի մասին: Ընկերությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել 2014թ. վերջի դրությամբ վճարման ենթակա ընդհանուր պահանջները: Այնուամենայնիվ, ելնելով պահուստավորման գործընթացին բնորոշ անորոշություններից, հնարավոր չէ միանշանակ կերպով հաստատել, որ մնացորդները համապատասխանորեն են գնահատված:

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) - Ընդամենը (բացառությամբ կյանքի ապահովագրության)**

(հազար դրամ)	Պատահարի տարի					Ընդամենը
	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	
<b>Կուտակային պահանջների գնահատական</b>						
Պատահարի տարվա վերջի դրությամբ	189,228	935,652	2,124,590	3,368,590	1,627,218	1,627,218
- մեկ տարի անց	213,315	903,269	2,118,076	3,239,608	-	3,239,608
- երկու տարի անց	213,315	902,670	2,121,010	-	-	2,121,010
- երեք տարի անց	213,315	903,765	-	-	-	903,765
- չորս տարի անց	213,315	-	-	-	-	213,315
Կուտակային պահանջների գնահատական	213,315	903,765	2,121,010	3,239,608	1,627,218	8,104,916
Կատարված կուտակային վճարումները առ հաշվետու ամսաթիվը	(213,315)	(903,659)	(2,115,985)	(3,214,048)	(1,393,288)	(7,840,295)
<b>Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով</b>	<b>-</b>	<b>106</b>	<b>5,026</b>	<b>25,560</b>	<b>233,930</b>	<b>264,622</b>

Պահանջների զարգացման վերլուծությունն ըստ գործունեության հիմնական ուղղությունների ներկայացված է ստորև

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) - Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն (Կասկո)**

(հազար դրամ)	Պատահարի տարի					Ընդամենը
	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	
<b>Կուտակային պահանջների գնահատական</b>						
Պատահարի տարվա վերջի դրությամբ	85,335	50,114	84,570	160,397	164,631	164,631
- մեկ տարի անց	88,149	50,114	91,332	164,549	-	164,549
- երկու տարի անց	88,149	50,114	91,332	-	-	91,332
- երեք տարի անց	88,149	50,114	-	-	-	50,114
- չորս տարի անց	88,149	-	-	-	-	88,149
Կուտակային պահանջների գնահատական	88,149	50,114	91,332	164,549	164,631	558,775
Կատարված կուտակային վճարումները առ հաշվետու ամսաթիվը	(88,149)	(50,114)	(91,332)	(164,549)	(140,731)	(534,875)
<b>Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>23,900</b>	<b>23,900</b>

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) – Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն - ԱՊՊԱ**

(հազար դրամ)	Պատահարի տարի					Ընդամենը
	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	
<b>Կուտակային պահանջների գնահատական</b>						
Պատահարի տարվա վերջի դրությամբ	-	870,366	1,305,529	1,539,813	1,132,701	1,132,701
- մեկ տարի անց	-	839,150	1,262,743	1,476,333	-	1,476,333
- երկու տարի անց	-	838,310	1,260,743	-	-	1,260,743
- երեք տարի անց	-	839,159	-	-	-	839,159
- չորս տարի անց	-	-	-	-	-	-
Կուտակային պահանջների գնահատական	-	839,159	1,260,743	1,476,333	1,132,701	4,708,936
Կատարված կուտակային վճարումները առ հաշվետու ամսաթիվը	-	(839,159)	(1,255,749)	(1,467,217)	(956,148)	(4,518,273)
<b>Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>4,993</b>	<b>9,116</b>	<b>176,553</b>	<b>190,663</b>



**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) - Առողջության ապահովագրություն**

(հազար դրամ)			Պատահարի տարի		2014թ.	Ընդամենը
	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.		
<b>Կուտակային պահանջների գնահատական</b>						
Պատահարի տարվա վերջի դրությամբ	90,242	11,136	730,123	1,660,768	321,788	321,788
- մեկ տարի անց	111,228	10,904	762,461	1,590,772	-	1,590,772
- երկու տարի անց	111,228	10,973	767,442	-	-	767,442
- երեք տարի անց	111,228	10,973	-	-	-	10,973
- չորս տարի անց	111,228	-	-	-	-	111,228
Կուտակային պահանջների գնահատական	111,228	10,973	767,442	1,590,772	321,788	2,802,203
Կատարված կուտակային վճարումները առ հաշվետու ամսաթիվը	(111,228)	(10,973)	(767,430)	(1,574,865)	(291,681)	(2,756,178)
<b>Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>12</b>	<b>15,907</b>	<b>30,107</b>	<b>46,026</b>

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) - Գույքի ապահովագրություն**

(հազար դրամ)			Պատահարի տարի		2014թ.	Ընդամենը
	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.		
<b>Կուտակային պահանջների գնահատական</b>						
Պատահարի տարվա վերջի դրությամբ	4,120	772	3,900	1,054	4,100	4,100
- մեկ տարի անց	4,120	946	1,150	1,682	-	1,682
- երկու տարի անց	4,120	946	1,150	-	-	1,150
- երեք տարի անց	4,120	946	-	-	-	946
- չորս տարի անց	4,120	-	-	-	-	4,120
Կուտակային պահանջների գնահատական	4,120	946	1,150	1,682	4,100	11,998
Կատարված կուտակային վճարումները առ հաշվետու ամսաթիվը	(4,120)	(946)	(1,150)	(1,488)	(3,261)	(10,965)
<b>Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>194</b>	<b>839</b>	<b>1,033</b>

**25. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք**

Ընկերության գնահատմամբ՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էապես չի տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքից:

**Իրական արժեքի հիերարխիա**

Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատում է օգտագործելով իրական արժեքի հետևյալ հիերարխիան, որն արտացոլում է գնահատման ժամանակ կիրառված նշանակալի տվյալները՝

- Մակարդակ 1՝ միանման ակտիվների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):
- Մակարդակ 2՝ Շուկայական տվյալների վրա հիմնված գնահատման մեթոդներ՝ կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս կատեգորիան ներառում է գնահատվող ներդրումներ օգտագործելով՝ նույն գործիքների համար գնորոշող շուկայական գներն ակտիվ շուկայում, նմանատիպ կամ նույն գործիքների համար գնորոշող գներ շուկաներում, որոնք համարվում են ոչ այնքան ակտիվ կամ այլ գնահատման մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի տվյալներ ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:

- Մակարդակ 3՝ Գնահատման մեթոդներ, օգտագործելով չդիտարկվող նշանակալի տվյալներ: Այս կատեգորիան ներառում է այն բոլոր գործիքները, որտեղ գնահատման մեթոդները ներառում են տվյալները, որոնք հիմնված չեն դիտարկվող տվյալների վրա և չդիտարկվող տվյալները նշանակալի ազդեցություն ունեն նմանատիպ գործիքների գնորոշող գների վրա: Այս տեսակի գործիքները բնորոշվում են հիմնվելով նմանատիպ գործիքների գնանշվող գների վրա, երբ էական չդիտարկվող ճշգրտումներ և ենթադրություններ են անհրաժեշտ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար;

Գնահատման մեթոդների նպատակն է՝ որոշել իրական արժեքն այնպես, որ այն արտացոլի այն գինը, որը կստացվեր չափման ամսաթվի դրությամբ ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր՝ պարտավորությունը փոխանցելիս՝ շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում:

Գնահատման մեթոդները ներառում են գուտ ներկա արժեքի և գեղչված դրամական հոսքերի մոդելները, համանման գործիքների հետ համեմատումը, որոնց գծով առկա են շուկայում դիտարկելի գներ և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդի նպատակն է՝ որոշել իրական արժեքն այնպես, որ այն արտացոլի ֆինանսական գործիքի գինը, որը կստացվեր հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է 31 դեկտեմբերի 2014թ. և 2013թ դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծություն, իրական արժեքի հիերարխիայում այդ իրական արժեքով չափման դասակարգմանը համապատասխան: Այդ գումարները հիմնած են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված արժեքների հիման վրա:

Ֆինանսական ակտիվներ/ ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեքը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հազար դրամով	Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական մուտքային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի մուտքային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի մուտքային տվյալների հարաբերակցությունը իրական արժեքին
---	--	-------------------------	--	---	--

**Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ**

ՀՀ պետական և կառավարական պարտքային արժեթղթեր	1,113,166	Մակարդակ 2	Չեղչված դրամական հոսքեր՝ հիմնված պայմանագրով ամրագրված պարտքային արժեթղթերի պայմանների վրա և ակտիվ շուկայում գնանշված պետական եկամտաբերության կորը հաշվետու ամսաթվի դրությամբ: Կիրառված եկամտաբերության կորը տատանվում էր 8.78% - 14.42%	կ/չ	կ/չ
--	-----------	------------	--	-----	-----

1,113,166

Ֆինանսական ակտիվներ/ ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեքը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հազար դրամով	Իրական արժեքի հիերարխիա հիմնական	Գնահատման տեխնիկա(ներ) և մուտքային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի մուտքային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի մուտքային տվյալների հարաբերակց ությունը իրական արժեքին
<b>Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</b>					
ՀՀ պետական և կառավարական պարտքային արժեթղթեր	1,127,701	Մակարդակ 2	Ձեռչված դրամական հոսքեր՝ հիմնված պայմանագրով ամրագրված պարտքային արժեթղթերի պայմանների վրա և ակտիվ շուկայում գնանշված պետական եկամտաբերության կորը հաշվետու ամսաթվի դրությամբ: Կիրառված եկամտաբերության կորը տատանվում էր 7.95% - 10.96% միջակայքում:	կ/չ	կ/չ
	<u>1,127,701</u>				

2014թ. դեկտեմբերի 31-ի և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի համար իրական արժեքը հիմնված է եղել ոչ-շուկայական դիտարկվող տվյալների վրա հիմնված գնահատման մեթոդների վրա:

Իրական արժեքի գնահատումն ուղղված է արժեքի հնարավորինս ճշգրիտ որոշմանը, որով ֆինանսական ակտիվը կարող է փոխանակվել ընթացիկ գործարքներում չփոխկապակցված կողմերի միջև: Այնուամենայնիվ հաշվի առնելով անորոշությունը և գնահատման սուբյեկտիվությունը, իրական արժեքը չի կարող մեկնաբանվել որպես ակտիվների անմիջապես վաճառքի կամ պարտավորությունների կատարման արդյունքում փոխհատուցելի գումար:

**26. Կապիտալի կառավարում**

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ-ի) կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ որպես ապահովագրական ընկերությունների կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն ընկերությունների կապիտալը պետք է կազմի 1,500,000 հազար դրամ սկսած 2011թ. հունվարի 1-ից:

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերը նշված նորմատիվային պահանջի խախտում չի արձանագրվել (2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնը):

## 27. Պայմանական դեպքեր

### (ա) Դատական վարույթներ

Ժամանակ առ ժամանակ, բնականոն գործունեության ընթացքում Ընկերության դեմ ներկայացվում են հայցեր: Իր գնահատումների և ներքին ու արտաքին մասնագիտական խորհրդատվությունից ելնելով՝ դեկավարությունը գտնում է, որ բացի սույն ֆինանսական հաշվետվություններում որպես պահուստ գրանցվածների, Ընկերությունն այլ էական վնասներ չի կրի:

### (բ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Դեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել սույն ֆինանսական հաշվետվություններ համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

### (գ) Գործարար միջավայրը

Հայաստանը դեռևս գտնվում է տնտեսական և քաղաքական փոփոխությունների գործընթացում: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի այն աստիճան զարգացած գործարար և կանոնակարգային ենթակառուցվածք, որը բնորոշ է ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններին: Ի լրումն, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեության ծավալները, ինչը թերևս չի արտացոլում ֆինանսական գործիքների արժեքները: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտ են հանդիսանում տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակը և տնտեսավարման կենտրոնացվածությունը, տարածաշրջանային անկայունությունները և միջազգային տնտեսական ճգնաժամը:

ՀՀ դրամի արժեզրկումը սկսվել է 2014թ. նոյեմբերին և շարունակվել է 2014թ. դեկտեմբերի ընթացքում: ՀՀ դրամի արժեզրկումը կախված է մի շարք գործոններից ինչպիսիք են՝ գլոբալ տնտեսական զարգացումները, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում դիտվող աճի պայմաններում ԱՄՆ դոլարի արժեվորումն այլ զարգացող և զարգացած երկրների արժույթների համեմատ: ԱՊՀ երկրներում իրավիճակը էլ ավելի են բարդացնում աշխարհաքաղաքական խնդիրները և նավթի գների անկումը: Այս գործոնները հանգեցրել են տնտեսական աճի կտրուկ անկման Ռուսաստանում

և ազգային արժույթի արժեզրկման: Սա իր հերթին մեծացրել է ճնշումը ԱՊՀ տարածաշրջանում, ինչի արդյունքում կրճատվել են արտահանման և փոխանցումների արդյունքում դոլարային ներհոսքերը:

Նման գործոնների ազդեցությունն Ընկերության վրա կարող է ներառել կրեդիտորներին վճարելու անկարողությունը, վարկանիշի վատթարացումը, ապրանքների իրացման դժվարությունները, ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրները և այլն: Այս բոլոր խնդիրները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերության իրացվելիությունը ինչպես նաև շարունակականության ապահովման հնարավորությունը կարող է նվազել: Ավելին, դեռևս առկա են անորոշություններ՝ կապված երկրների տնտեսական իրավիճակի հետ, որը կարող է հանգեցնել արտասահմանից ներհոսող դրամական միջոցների պակասորդի, ինչպես նաև հանքարդյունաբերական արտադրանքի գների անկման, որը մեծապես որոշիչ դեր է խաղում ՀՀ տնտեսության համար: Առավել խիստ զգալի շուկայական սպառնալիքների և դժվարությունների արդյունքում ՀՀ տնտեսությունը, ինչպես նաև Ընկերության գործունեությունը կարող են վատթարանալ: Այնուամենայնիվ, քանի որ նման ենթադրությունների հիմքում ընկած են բազմաթիվ փոփոխական պայմաններ և անորոշություններ, դեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե վերը նշված գործոնների ազդեցությունը դիտարկելի և արժանահավատորեն չափելի դառնար Հայաստանի համար:

## 28. Գործարքներ կապակցված կողմերի հետ

### (ա) Գործարքներ տնօրենների և վերադաս ղեկավարության հետ

Ստորև ներկայացված է վարչական ծախսերում ներառված վերադաս ղեկավարության և Խորհրդի ընդհանուր վարձատրությունը (Ման. 6):

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
Աշխատավարձի գծով հատուցումներ	80,806	307,303
<b>Ընդամենը վարձատրություն</b>	<b>80,806</b>	<b>307,303</b>

Ստորև ներկայացված են 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերադաս ղեկավարության հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջինացված տոկոսադրույքները:

(հազար դրամ)	31 դեկտեմբերի, 2014թ.	Միջին տոկոսադրույք	31 դեկտեմբերի, 2013թ.	Միջին տոկոսադրույք
<b>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</b>				
Տրված վարկեր	3,990	12%	3,029	12%
Այլ ակտիվներ	380		-	
Ընդամենը	<b>4,370</b>	-	<b>3,029</b>	-

Տնօրենների և վերադաս ղեկավարության հետ գործարքները 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար հետևյալն են՝

(հազար դրամ)	2014թ.	2013թ.
<b>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</b>		
Համախառն ապահովագրավճարներ	258	-
Տոկոսային եկամուտ	360	69
		60

**(բ) Գործարքներ բաժնետերերի հետ**

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետերերի հետ գործարքների մնացորդը կազմել է 41,640 հազար դրամ (2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 125,820 հազար դրամ)

**(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ**

Այլ կապակցված կողմերի հետ գործարքները ներառում են բաժնետերերի հետ կապակցված ընկերությունների հետ գործարքները:

Ստորև ներկայացված են 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները:

<b>(հազար դրամ)</b>	<b><u>31 դեկտեմբերի, 2014թ.</u></b>	<b><u>31 դեկտեմբերի, 2013թ.</u></b>
<b>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն Ակտիվներ</b>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,832	8,634
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	251,647	227,538
Ապահովագրության և վերապահովագրության գծով ստացվելիք գումարներ	16,759	-
<b>Պարտավորություններ</b>		
Փոխառություններ	-	1,287,907
Ստորադաս փոխառություններ	1,005,869	859,007
Ապահովագրության և վերապահովագրության գծով վճարվելիք գումարներ	39,407	28,133

Ստորև ներկայացված են 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների արդյունքները:

<b>(հազար դրամ)</b>	<b><u>2014թ.</u></b>	<b><u>2013թ.</u></b>
<b>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</b>		
Համախառն ապահովագրավճարներ	4,927	46,520
Վերապահովագրողներին զիջված ապահովագրավճարներ	(80,572)	(2,839)
Չեղյալ հայտարարված ապավագրավճարներ և պահուստավորում ապահովագրության գծով ստացվելիք գումարների գծով	(400)	(28)
Մարված պահանջներ առանց վերապահովագրության (վերապահովագրության մասնաբաժնի)	18,064	-
Ստացված պահանջներ	-	(17,368)
Ձեռքբերման ծախսեր	(245)	(254)
Զուտ կոմիսիոն եկամուտ վերապահովագրման գծով	23,988	440
Տոկոսային եկամուտ	18,465	45,043
Տոկոսային ծախս	(72,239)	(118,714)